20.qxd 08/10/2026 15:56 Page 1

Գեղամա աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 9 հոկտեմբերի 2026թ. թիվ 20 (648)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԽՐԱԽՈՒՏԵՑ ՄԱՐԶԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 25-ին Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի տարածքում տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության գույքի եւ սարքավորումների ցուցադրության միջոցառում, որում ընդգրկված էին նաեւ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտները:

Միջոցառմանը ներկայացված էին Գեղարքունիքի մարզի փրկարարարական վարչության տեխնիկական միջոցները եւ սարքավորումները:

Միջոցառմանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, մարզպետի խորհրդական Սեւակ Խլղաթյանը, Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Բոշյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմերի աշխատակիցներ:

Մարզի փրկարարներին ողջունեց մարզպետ Կարեն Սարգսյանը՝ գնահատելով նրանց

ամենօրյա անձնուրաց ծառայությունն ու արտակարգ իրավիճակներում գործելու վճռականությունը եւ արդյունավետությունը: Կարեն Սարգսյանը հաջողություններ մաղթեց մարզի փրկարարներին՝ միաժամանակ նրանց պարգեւատրելով Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով:

Մարզի մի խումբ փրկարարներ արժանացան նաեւ Գավառ համայնքի ղեկավարի շնորհակալագրին: Պարգեւները հանձնեց Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Բոշյանը:

Պարգեւների հանձնումից հետո ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ Գարեգին Հակոբյանը միջոցառմանը մասնակից դպրոցականներին ծանոթացրեց փրկարար ծառայության տեխնիկական միջոցներին ու սարքավորումներին, դրանցով իրականացվող գործողություններին: Փրկարարները հանդես եկան ցուցադրական առանձին վարժություններով:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԽՈՐԱՆԱՇԱՏ ՎԱՆՔ

Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին եւ պսակըդ վեհ...

Վահան Տերյան

Օգոստոսի 29-ին հնասեր, «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանի հետ ուխտագնացություն ձեռնարկեցինք դեպի նշանավոր ու հռչակավոր Խորանաշատ վանք, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Չինարի գյուղից 2.5 կմ հյուսիս-արեւելք, անտառապատ սարի արեւմտյան լանջին:

Մեր խմբի ամենակրտսեր ուղեւորն ու ուխտագնացը Թաթուլի կրտսեր, ինն ամսական որդի Գոռն է, ով գրեթե անտրտունջ, նույնիսկ խինդ ու ծիծաղով մեզ հետ անցավ շուրջ 400 կիլոմետր ճանապարհը ու հաղորդվեց Հայաստան աշխարհի նշանավոր ու վաղեմի սրաբավայրերից մեկի լուսավոր խորհրդին:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս տարի Տավուշի մարզ կատարած ուխտագնացությունը որոշեցինք ձեռնարկել Գավառ-Սեւան-Ճամբարակ-Նավուր նորանորոգ ճանապարհով, որը պետական միջոցներով հիմնանորոգվել է նախորդ երկու տարիների ընթացքում: Ծրագրի արժեքը կազմել է 3,6 միլիարդ դրամ:

Երբ Թթուջրի հատվածով մտնում ենք Տավուշի մարզ, բացի ասֆալտապատ ու բարեկարգ ճանապարհը, մեզ հիացնում է հրաշագեղ բնությունը, որն աստիճանաբար սկսում է աշնանային երանգներ հագնել:

Մեր ձախ կողմում Միափորի լեռնաշղթայի քարքարոտ, ծառերից գրեթե մերկ, սակայն ալպյան մարգագետիններով հարուստ լեռնալանջերն են, իսկ աջ կողմում արդեն անտառների խտության մեջ ծածկված Տավուշ աշխարհի ձորերն ու լեռները:

Ճանապահի կեսից, չհասած Նավուր գյուղին, թեքվում ենք աջ ու արդեն անցնում խիտ անտառների մեջ ծածկված, գրունտային ճանապարհով: Ճիշտ կլինի ասել, որ մենք գնում ենք մարդկային կյանքի աղմուկից զատված, խորհրդավոր լռության ու վայրի բնության մեջ թաղված հեքիաթային ճանապարհով: Բավական երկար տարածության վրա մեզ ուղեկցում է Խնձորուտ գետը, որը, չնայած արդեն ամռան ավարտին, դեռ հոսում է ջրառատ ու շառաչուն վիճակում: Բառերով դժվար է նկարագրել այն ապրումներն ու հույզերը, որ պատել էին մեզ այս ճամփորդության ընթացքում: Ամեն սանտիմետրի ու մետրի վրա իրար հաջորդող գեղեցկագույն պատկերներն են, որոնք հրաշքի պես հայտնվում են աչքերիդ առաջ ու, մեքենայի սլացքի հետ, արագ չքվում տեսադաշտիցդ՝ քեզ կարոտ թողնելով կյանքի ու բնության գաղտնախորհուրդ տեսիլքներից: Ծառերի թփերն այնքան խիտ են ու իրար կպած, որ արեւի շողքերը գետնին ու գետի ջրերին հասնելու համար հազիվ են շատ բարակ անցքեր գտնում:



/շարունակությունը՝ էջ 6-ում/

ՉԿԱ ԱՎԵԼԻ ՎԵՀ ԳՈՐԾ, ՔԱՆ ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԻ ՇԵՆԱՅՈՒՄՆ Է

/«Գեղամա աշխարհ» թերթի հարցազրույցը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ/

Արդեն բոլորում է հինգ տարին կամ մեկ ընտրաշրջանը, ինչ ՀՀ Կառավարության որոշմամբ ձեւավորվեց Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքը, իսկ ընտրությունների արդյունքում համայնքի ղեկավար ընտրվեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Հովհաննես Հովեյանը:

Սույն հարցազրույցն ամփոփում է 2021 թվականին կայացած Մարտունի համայնքի ավագանու ընտրություններում հաղթած քաղաքական ուժի, Մարտունու համայնքապետարանի եւ համայնքի ղեկավարի աշխատանքային գործունեության ընթացքում գրանցած ձեռքբերումներն ու արդյունքները: Միաժամանակ անդրադարձ է արվում Մարտունի համայնքի ավագանու հերթական ընտրություններին, երկրորդ անգամ հաղթելու դեպքում՝ համայնքի ղեկավարի ու համայնքապետարանի հերթական անելիքներին, ծրագրային առաջնահերթություններին:

Հարց- Պարոն Հովեյան, արդեն բոլորեց 5 տարին, ինչ Մարտունի համայնքը գործում է միավորված բնակավայրերով: Նույնքան կենսագրություն ունի նաեւ Մարտունու համայնքապետարանը: Ի՞նչ հաջողություններ ու ձեռքբերումներ է արձանագրել Մարտունին Ձեր ղեկավարությամբ 2021-2026 թվականների ընթացքում, ու որքանով եք արդյունավետ ու արդարացված համարում Մարտունու բոլոր բնակավայրերի միավորումը մեկ ընդհանուր համայնքի մեջ, որը եղավ ՀՀ կառավարության կողմից համայնքների խոշորացման քաղաքականության ներդրման պայմաններում:

Պատասխան- Սկսենք հարցի վերջին մասից, քանի որ մեր ձեռքբերումները մեծապես կապված են նաեւ համայնքների խոշորացման քաղաքականության հետ: Սկզբում շատերը դեմ էին նման ընդգրկուն ծավալներ ունեցող խոշորացմանը: Սակայն ժամանակի ընթացքում գրեթե բոլորը տեսան ու համոզվեցին, թե որքանով է արդյունավետ նման քաղաքականության ներդրումը: Ժամանակն, այո, ցույց տվեց, որ ամեն ինչ արդարացված ու արդյունավետ է, քանի որ խոշորացմանը նախորդած տարիների ընթացքում մեր ոչ մի բնակավայր նման թափով ու ծավալներով զարգացում չի ապրել ԽՍՀՄ փլուզումից հետո, քան արձանագրվեց վերջին 5 տարիների ընթացում: Ինքս երկար տարիներ ղեկավարել եմ Վարդենիկ համայնքը, ուր բազմաթիվ ծրագրեր է իրականացվել, նկատելի աշխատանք կատարվել մարդկանց կենսապայմանների բարելավման, սոցիալ –տնտեսական զարգացում ապահովելու ուղղությամբ, սակայն վերջին հինգ տարիների արդյունքներն անհամեմատելի են 1996-2021 թվականներին գրանցված ցուցանիշների հետ: Բավական է ասել, որ 2018-2025 թվականների ընթացքում Վարդենիկում պետության եւ համայնքի կողմից իրականացված կապիտալ ներդրումները կազմել են 3 միլիարդ 608 միլիոն 372 հազար դրամ, որի առյուծի բաժինը, բնականաբար, բաժին է ընկնում վերջին հինգ տարիներին: Սա շատ ավելին է, քան մեզ հաջողվել է անել այն տարիներին, երբ Վարդենիկը գործում էր որպես առանձնացված համայնք, այլ ոչ թե խոշորացված բնակավայր, որի պայմաններում մեզ հաջողվել է իրականացվել սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 32 ծրագիր:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

20.qxd 08/10/2026 15:56 Page 2

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԱՆԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՆՈՐ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԵՎ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՅՑԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում «Մասնակցային բյուջետավորում-2026» գործընթացի շրջանակներում արդեն տրվել է Բանավան թաղամասի նոր զբոսայգու եւ խաղահրապարակի կառուցման աշխատանքների մեկնարկը: Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, «Մասնակցային բյուջետավորում-2026» գործընթացի շրջանակներում այս տարի քվեարկությամբ ներկայացվել են «Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Բանավան թաղամասում խաղահրապարակի կառուցում» եւ «Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրում կինոդահլիճի վերանորոգում» ծրագրերը, որոնք արդեն ստացել են ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության համաձայնությունը:

«Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Բանավան թաղամասում զբոսայգու եւ խաղահրապարակի կառուցում» ծրագրի արժեքը կազմում է 49 միլիոն դրամ, որից 9 միլիոն 800 հազար դրամը հատկացնում է համայնքը, 39 միլիոն 200 հազար դրամը՝ ՀՀ կառավարությունը:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման եւ դրական փորձաքննության ստացումից հետո սահմանված կարգով կայացել է շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթը: Հաղթող ճանաչված շինարարական կազմակերպության հետ արդեն կնքվել է համապատասխան պայմանագիր, եւ տեղում մեկնարկել են ակտիվ շինարարական աշխատանքները:

-Սեպտեմբերի 16-ին Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանն այցելեց շինհրապարակ, տեղում ծանոթացավ մեկնարկած աշխատանքների ընթացքին, շինարարի հետ քննարկեց ծրագրով նախատեսված ժամկետներն ու որակական չափանիշները: Համայնքի ղեկավարն ընդգծեց, որ աշխատանքները պետք է իրականացվեն բարձր պատասխանատվությամբ՝ ապահովելով ինչպես անվտանգության, այնպես էլ ներառականության բոլոր պահանջները, որպեսզի Բանավան թաղամասի նոր զբոսայգին դառնա հարմարավետ ու ուրախ ժամանցի վայր մեր բոլոր երեխաների համար,- ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԿԱՅԱՆԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում ՏԻՄ ընտրությունները կկայանան 2026 թվականի նոյեմբերի 29-ին:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի 2026 թվականի սեպտեմբերի 10-ի N 545-Ա որոշմամբ համամասնական ընտրակարգով անցկացվող տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները Սեւան համայնքում կանցկացվեն 2026 թվականի նոյեմբերի 29-ին:

Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի տեղեկացմամբ՝ ՀՀ ՆԳՆ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տվյալներով՝ Սեւան համայնքում ընտրելու իրավունք ունեն 32 791 քաղաքացի:

Գեղարքունիքի մարզի Մարտունի, Գավառ եւ Վարդենիս համայնքներում ՏԻՄ ընտրությունները կկայանան 2026 թվականի հոկտեմբերի 25-ին: Ճամբարակ համայնքում ՏԻՄ ընտրությունը կանցկացվի 2027 թվականին:

ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ Է ԵՆԹԱԿՎՈՒՄ ՍԵՎԱՆԻՑ ԴԻԼԻՋԱՆԻ ԹՈՒՆԵԼ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ 6 ԿԻԼՈՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՏՎԱԾԸ

Սեպտեմբերի սկզբներից ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում սկսվել եւ ընթանում են Երեւան-Սեւան-Իջեւան միջպետական նշանակության ճանապարհի 74-ից 80 կիլոմետրանոց հատվածի միջին նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Սեւանից Դիլիջան տանող 6 կիլոմետրանոց ճանապարհահատվածի միջին նորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 287 միլիոն 400 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է փոսային նորոգում, որոշ տեղերում հարթեցնող շերտի տեղադրում եւ միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցում 55818 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն նաեւ ճանապարհի կահավորման եւ գծանշման աշխատանքներ:

2026 թվականի հոկտեմբերի առաջին օրերի դրությամբ աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԹԻՄԸ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼՈՒՄ

Ճամբարակի ավագ դպրոցի թիմը հաղթող է ճանաչվել 2026 թվականին անցկացվող նախազորակոչային եւ զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերի Գեղարքունիքի մարզային փուլում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, ՀՀ Գեղարքունիքի մարզում ռազմամարզական խաղերի ներդպրոցական փուլն անցկացվել է մինչ 2026 թվականի սեպտեմբերի 18-ը: Այս փուլում ձեւավորված դպրոցական թիմերը սեպտեմբերի 24-25-ը մասնակցել են համայնքային փուլին, որն անցկացվել է Գավառ, Մարտունի, Սեւան, Վարդենիս եւ Ճամբարակ համայնքներում: Համայնքային փուլում 1-ին տեղեր գրաված թիմերն իրավունք էին ստացել՝ մասնակցելու մարզային փուլի մրցումներին, որն անցկացվել է հոկտեմբերի 2-ին՝ Գավառի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցի մարզադաշտում: Մրցապայքարը տեղի է ունեցել ռազմամարզական խաղերի ծրագրով, որը ներառում է՝ նռնակի նետում հեռավորության վրա, 8 կիլոգրամանոց ուսապարկով փոխանցավազք, ձգումներ պտտաձողից, վազք 1000 մետր, հրաձգություն օդամղիչ հրացանով եւ ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում վարժաձեւերից: Ծավալվել է հետաքրքիր եւ համառ պայքար, որի արդյունքում հավաքած 1414 միավորով հաղթող է ճանաչվել Ճամբարակի ավագ դպրոցի թիմը: 1015 միավորով երկրորդ տեղը գրավել է Զոլաքարի Ալվարդ Վարդանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երրորդ հորիզոնականը 750 միավորով զբաղեցրել է Գավառի ավագ դպրոցի թիմը:

Հաղթող թիմերին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից հանձնվել են համապատասխան կարգի հավաստագրեր:

Մարզային փուլում հաղթած Ճամբարակի ավագ դպրոցի թիմը զինղեկ Նիկալ Ճաղարյանի գլխավորությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզը կներկայացնի հոկտեմբերի 15-18-ը կայանալիք ռազմամարզական խաղերի հանրապետական եզրափակիչ փուլում:

Ռազմամարզական խաղերն անցկացվում են 4 փուլով՝ ներդպրոցական, համայնքային, մարզային եւ հանրապետական: Ռազմամարզական խաղերին մասնակցում են հանրակրթական դպրոցների 10-12-րդ դասարանցիներից ձեւավորված թիմերը: Թիմերի կազմերում հանդես են գալիս 9-ական տղա մարզիկ:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՁԻԱՐՇԱՎԻ ՄՐՑԱՇԱՐ

Գավառի համայնքապետարանի եւ «Սարվոր» զբոսաշրջային, սոցիալ-կրթական, բնապահպանական ՀԿ համատեղ նախաձեռնությամբ, մրցաշարի պատասխանատուներ Նարեկ Մուրադյանի եւ Լալա Մկրտչյանի կազմակերպմամբ, Գավառում առաջին անգամ անցկացվել է ձիարշավի մրցաշար:

Մրցաշարին մասնակցել են Գավառ քաղաքի եւ բնակավայրերի 21 ձիավարներ, որոնց իր ներկայությամբ ոգեւորել է Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը:

Ութ հարյուր մետր մրցուղին ամենաարագն անցած երեք մասնակիցները Գավառ համայնքի ղեկավարի կողմից արժանացել են դրամական պարգեւների եւ հավաստագրերի:

Առաջին մրցանակին արժանացել է Վարդգես Մանուկյանը, երկրորդ մրցանակին՝ Սիրակ Սաֆարյանը, երրորդ մրցանակին՝ Արթուր Կարապետյանը:

Գեւորգ Զախարյանին հանձնվել է շնորհակալագիր՝ կազմակերպչական աշխատանքներում աջակցություն ցուցաբերելու համար:

Մրցանակները հանձնել է Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:

Ալվարդ Մանուկյան

ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՍԵՎԱՆ-ՎԱՐՍԵՐ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում օգոստոսի վերջերից սկսվել եւ ընթանում են Սեւան-Վարսեր մարզային նշանակության ճանապարհի միջին նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 179 միլիոն 970 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Արդեն կատարվել են փոսային նորոգման, հարթեցման, կողնակների բարեկարգման եւ շուրջ 22 հազար քառակուսի մետր մակերեսով նոր ասֆալտբետոնե ծածկի տեղադրման աշխատանքները:

Ծրագրի ավարտին ճանապարհը կկահավորվի նաեւ անհրաժեշտ նշաններով:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Սեւան-Վարսեր մարզային նշանակության ճանապարհի 3,3 կմ հատվածում իրականացվող միջին նորոգման աշխատանքների ընթացքին օրերս ծանոթացել է տեղում:

Հոկտեմբերի առաջին օրերի դրությամբ շինարարական աշխատանքներն արդեն ավարտված են:

20.qxd 08/10/2026 15:56 Page 3

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԽՐԱԽՈՒՍԵՑ ՄԱՐԶԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն Ուսուցչի օրվա կապակցությամբ ընդունեց ու խրախուսեց մարզի հանրակրթական դպրոցների 23 մանկավարժների, ովքեր անթերի ու լավագույն կողմերով են կատարել իրենց աշխատանքային պարտականությունները:

Հանդիպման սկզբում Կարեն Սարգսյանը ողջունեց ու մասնագիտական տոնի առիթով շնորհավորեց մանկավարժներին՝ նրանց մաղթելով քաջառողջություն, անձնական ու աշխատանքային հաջողություններ:

Մարզպետը ներկայացրեց մարզում իրականացված ու ընթացող դպրոցաշինական ծրագրերը, այս ուղղությամբ նախատեսվող նոր ծրագրերը, շեշտելով, որ ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են գտնվում կրթության ոլորտի բարեփոխումներն ու աշխատանքային միջավայրի բարելավման հետ կապված բոլոր խնդիրները:

Հանդիպմանը հրավիրված մանկավարժները, շնորհակալություն հայտնելով գնահատանքի ու խրախուսման համար, միաժամանակ հանդես եկան մի շարք առաջարկություններով ու հարցերով, խոսեցին մանկավարժական փորձի փոխանակման, կամավոր ատեստավորման արդյունքների, համագործակցության ծրագրերի ու առաջնահերթ այլ հարցերի շուրջ:

Հանդիպման ավարտին մարզպետ Կարեն Սարգսյանը Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով խրախուսեց հրավիրված մանկավարժներին՝ ցանկանալով բեղմնավոր ու ձեռքբերումներով լի աշխատանքային հաջողություններ:

Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրին արժանացել են՝ Գավառի թիվ 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Լուսինե Հովհաննիսյանը, Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցի շախմատի եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչ Գնել Թորոյանը, Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի հասարակագիտության եւ հայոց պատմության ուսուցիչ Արմինե Կարապետյանը, Գավառի թիվ 1 հիմնական դպրոցի դասվար Ժենյա Միրիբյանը, Լանջաղբյուրի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Սամվել Դավթյանը, Ծովինարի միջնակարգ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ Սահանուշ Հովհաննիսյանը, Ներքին Գետաշենի էիվ 1 միջնակարգ դպրոցի կենսաբանության ուսուցիչ Լալա Գեւորգյանը, Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցիչ Արփիկ Սահակյանը, Ծովսարի միջնակարգ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ Աննա Ավետիսյանը, Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Նաիրա Սարուխանյանը, Մարտունու թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցիչ Կարեն Համբարձումյանը, Սեւանի թիվ 3 հիմնական դպրոցի ՆԶՊ ուսուցիչ Ռուբիկ Գալստյանը, Սեւանի թիվ 4 հիմնական դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ Նաիրա Գաբրիելյանը, Ծովագյուղի միջնակարգ դպրոցի հասարակագիտության ուսուցիչ Հերմինե Գեւորգյանը, Վարսերի միջնակարգ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ Վիկտորյա Առաքելյանը, Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցի գերմաներեն եւ անգլերեն լեզուների ուսուցիչ Էլինա Հովհաննիսյանը, Դրախտիկի միջնակարգ դպրոցի հայոց պատմության եւ հասարակագիտության ուսուցիչ Արարատ Մովսիսյանը, Արտանիշի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Սյուզաննա Մանուչարյանը, Վարդենիսի թիվ 2 միջնակարգ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ Մարինե Առաքելյանը, Վարդենիսի թիվ 3 միջնակարգ դպրոցի ֆրանսերենի ուսուցիչ Աստղիկ Սաֆարյանը, Ակունքի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Նարինե Խաչատրյանը, Գեղամասարի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Գագիկ Աբրահամյանը եւ Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցիչ Մարինե Ասլանյանը:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌԻ ԹԱՔՆՎԱԾ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Գավառ քաղաքի արեւմտյան մասում տարածվում է մի հնավայր, ուր ոչ միայն նկատվում են բնակարանների, ամրոցի աշտարակների, պարիսպների, եկեղեցու ավերակների հետքեր, այլ նաեւ մեկ խաչքար ու մեկ արձանագիր ու պատկերազարդ տապանաքար:

Խաչքարը թեեւ անվիմագիր է, սակայն ունի շատ առանձնահատուկ զարդանախշեր ու արեւի սկավառակ, որի մեջ էլ տեղադրված է խաչի պատկերը:

Խաչքարը երկատված է, նրա մի մասն էլ գտնվում է մոտ քսան մետր ցած, ձորի մեջ:

Տապանաքարը գտանք հովիվ Ռուստամի մատնանշած տեղում, նրա իսկ ուղեկցությամբ:

Տապանաքարի երկու կողմերում նկատելի է հայատառ վիմագրությունը, որը դժվար ընթեռնելի է մամռակալած լինելու պատճառով:

Որոշ տառեր, սակայն երեւում են այնքան հստակ, որ հովիվ Ռուստամն է ոգեւորված մատնացույց անում, հատկապես թ տառը:

Իր ոճով այն նման է ուշ միջնադարյան տապանաքարերի, սակայն ստույգ թվականը որոշելու համար հարկ կլինի վերծանել վիմագրությունը:

Շատ հետաքրքիր էր եկեղեցու ավերակը, որը ցայտուն երեւում էր իր հատակագծի մեջ, իսկ ներսում կանգնած է քարե սյան մի մշակված բեկորը:

Դժվար է ասել, թե ինչ անվանում է ունեցել այս բնակատեղին ու երբ է լքվել, սակայն կարելի է ենթադրել, որ այն գործել է հազարամյակներ շարունակ ու լքվել պատմաքաղաքական կամ բնական աղետների հետեւանքով:

Տարածքում նկատելի են նաեւ հնագույն դամբարանների հետքեր:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՄԵԾԱՐԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՈՒ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ԿԱՆԱՆՑ

Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի կողմից մեծարվել են համայնքի երկու ամենատարեց կանայք՝ կյանքի մեկ դարը բոլորած Ասյա Հակոբյանը եւ 104 տարեկան Ռոզա Գասպարյանը:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը եւ համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներն անձամբ այցելել են համայնքի երկու ամենատարեց կանանց, հանձնել համայնքապետարանի կողմից պատրաստված նվերները, ջերմ ու անմիջական զրույց ունեցել նրանց հետ՝ մաղթելով առողջություն, երկարակեցություն եւ խաղաղ օրեր:

Ասյա Հակոբյանը մասնագիտությամբ մանկավարժ է, ով տասնամյակներ շարունակ Մարտունի քաղաքում կրթել, դաստիարակել ու կյանք է ճանապարհել բազմաթիվ մարդկանց, ովքեր միշտ սիրով ու ակնածանքով են հիշում իրենց ուսուցչին:

Ռոզա Գասպարյանը տնային տնտեսուհի է եղել, աշխատել է նաեւ Մադինայի կոլտնտեսությունում, ընտանիքը պահել ու շահել հողագործության ու անասնապահության մեջ աշխատելով: Այժմ երջանիկ ծերություն է վայելում իր բազմանդամ ընտանիքի՝ զավակների, թոռների ու ծոռների հետ: Մարտունի համայնքն ուն բազմաթիվ տարեցներ, ովքեր արդեն հատել են իննսուն տարվա շեմը եւ սիրով ու հարգանքով են շրջապատված իրենց ընտանիքներում: Ռոզա Գասպարյանն ունի 7 երեխա, 16 թոռ, 42 ծոռ, 21 կոռ՝ թվով 86 շունչ:

ԲԱԴՆՈՑԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՄՐՈՑԸ

Իմ նախնյաց գյուղից՝ Բադնոցից 3 կմ հյուսիս է գտնվում Վանի թագավորության արքա Մենուայի (Ք.ա.810-786թթ) կողմից կառուցած Հալուդիրի քաղաք-ամրոցի ավերակները: Քաղաքը նվիրվել է Խալդի աստծուն, ինչի մասին հայտնաբերվել է սեպագիր արձանագրություն: Ամրոցն ունեցել է կարեւոր ռազմավարական նշանակություն եւ պահպանել այն մինչեւ թագավորության ավարտը:

Պաշտպանական պարիսպների հաստությունը կազմում է 4 մետր: Ամրոցի ստորին դարավանդների պատերը հայտնաբերվել են ամենաբարձր կետից մոտ 60-70 մետր ցածր՝ արեւմտյան, արեւելյան եւ հարավային լանջերին: Արեւմտյան հատվածում պեղված պարսպի հաստությունը 5 մետր է: Ժայռային հիմքի վրա բարձրացող պատերի քարե հիմքերն ու հում աղյուսից կառուցված հատվածները որոշ տեղերում պահպանվել են մինչեւ 4 մետր բարձրությամբ: Այս պաշտպանական պարիսպը ուրարտական պաշտպանական համակարգի եզակի օրինակներից է:

տաճարը գտնվում է միջնաբերդի գագաթին: Պատերի հաստությունը 4 մետր է: Հարավ-արեւելքից 3,20 մ երկարությամբ մի միջանցք տանում է դեպի 5 x 5 մ չափսերով տաճարի ներքին սենյակը (ցելլան): Միջանցքի լայնությունը տատանվում է 1,50-ից 1,75 մետրի սահմաններում: Հատակը սալարկված է եռանկյունաձեւ եւ ուղղանկյունաձեւ քարերով: Ներքին սենյակը շրջապատող պատերի բարձրությունը 3,5 մետր է: Տաճարի առջեւ կա քառանկյուն բակ: Տաճարի արեւելյան պատի եւ լանջի միջեւ գտնվող ուղղանկյուն սենյակում հայտնաբերվել են տաճարին նվիրաբերված բրոնզե նիզակների ծայրակալներ, երկաթե եւ բրոնզե նետագլուխներ, բրոնզե ապարանջաններ, կապույտ քարերով զարդարված բրոնզե վարդյակներ, ֆրիտից պատրաստված գավազանի գլխիկներ եւ առյուծի բրոնզե արձանիկներ: Այդ սենյակի մոտակայքում հայտնաբերվել է նաեւ արձանագրություն: Արձանագրությունը վկայում է, որ Արգիշտի Ա-ն կառուցել է ,է-Աշիշուշիե-ն (Աշիշուշիի տունը): Նման կառույցների առկայությունը Վանի բերդում, Քեֆում եւ Այանիսում վկայում է այն մասին, որ սա արքայական քաղաք է եղել: Պարզվել է, որ տաճարի պատերը զարդարված են եղել որմնանկարներով, որոնք պատկերել են զոհաբերության կենդանիներ՝ բաց կապույտ, կարմիր կամ մուգ գույներով:

Միջնաբերդի ջրամատակարարումն իրականացվել է արեւելյան ուղղությամբ 2 կմ հեռավորության վրա գտնվող աղբյուրից եկող խողովակների միջոցով, թեեւ մակերեսին խողովակի հատվածներ չեն հայտնաբերվել:

Փաստորեն իմ գյուղի՝ Բադնոցի տեղում եղել է Հալուդիրի քաղաքը:

Խաժակ Սիրեկանյան

20.qxd 08/10/2026 15:56 Page 4

ՉԿԱ ԱՎԵԼԻ ՎԵՀ ԳՈՐԾ, ՔԱՆ ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԻ ՇԵՆԱՅՈՒՄՆ Է

«Գեղամա աշխարհ» թերթի հարցազրույցը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանի հետ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Շարունակենք խոսել թվերի լեզվով ու կատարած աշխատանքների արդյունքներով: Մարտունի քաղաքում վերոնշյալ ժամանակահատվածում պետության ու համայնքի կողմից կատարված կապիտալ ներդրումները կազմել են շուրջ 9 միլիարդ դրամ, Ներքին Գետաշեն գյուղում՝ 6 միլիարդ 399 միլիոն787 հազար դրամ, Գեղհովիտ գյուղում՝ 5 միլիարդ 108 միլիոն դրամ, որոնց արդյունքում յուրաքանչյուր բնակավայրում իրականացվել է 30-ից ավելի սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության ծրագրեր:

Բայց խոշորացման քաղաքականությունը ոչ միայն խոշոր բնակավայրերի զարգացման վրա է դրական ու էական ազդեցություն թողել: Առավել քան շահել են նաեւ բնակչությամբ սակավ բնակավայրերը, որտեղ նախորդ տարիներին հազիվ մեկ-երկու ծրագիր էր հաջողվում իրականացնել, քանի որ կառավարության կողմից տրամադրվող դոտացիան հատկացվում էր բնակչության թվաքանակով, ու հատկացված գումարը հազիվ բավարարում էր աշխատավարձերի վճարմանն ու վարչական ապարատի ծախսերի պահպանմանը:

Իսկ խոշորացումից հետո կտրուկ փոխվեց իրավիճակը, եւ փոքր բնակավայրերը եւս ընդգրկվեցին սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում: Այսպես, Մադինա գյուղում, որն ամենափոքր բնակավայրերից է, վերջին հինգ տարիների ընթացքում ներդրվել է 2 միլիարդ 654 միլիոն 195 հազար դրամ, որի արդյունքում իրականացվել է 16 ծրագիր: Առավել աչքի զարնող ու խոշոր ծրագիր է արդի չափորոշիչներին համապատասխան կրթահամալիրի կառուցումը, որի բացմանն ականատես կլինենք մոտակա ամիսների ընթացքում: Համեմատաբար փոքր բնակավայրերից է Ծակքարը, որտեղ վերջին հինգվեց տարիների ընթացքում կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 194 միլիոն դրամ, ինչի արդյունքում իրականացվել է 39 ծրագիր: Անգամ ամենափոքր բնակավայր համարվող Լեռնակերտում, որը գործել ու գործում է Գեղհովիտ գյուղի վարչական կազմում, աննախադեպ ներդրումներ ու հսկայական աշխատանք է իրականացվել՝ դպրոցի նոր շենքի, ներհամայնքային ճանապարհների, ոռոգման ջրագծերի կառուցման տեսքով: Այսօր արդեն այդ բնակավայրը դարձել է անճանաչելի, անգամ պետական աջակցության ծրագրով այստեղ նոր բնակարանների կառուցման ծրագիր է ներդրվում: Ի դեպ, մեզ հաջողվել է հիմնանորոգել Լեռնակերտից Մադինա տանող ճանապարհը՝ այն դարձնելով ասֆալտապատ ու բարեկարգ, մի բան որ չի կատարվել անգամ ԽՍՀՄ ժամանակներում: Հիմա այդ ճանապարհը ձեռք է բերել տնտեսական ու զբոսաշրջային նկատելի նշանակություն:

Ավելին, հենց վերջին հինգ տարիների ընթացքում խոշորացման քաղաքականության ու կառավարության կողմից կատարված հսկայածավալ ներդրումների արդյունքում մեզ հաջողվել է լուծում տալ մեր համայնքում կուտակված բազմազան ու բազմապիսի հիմնախնդիրների, որոնք անգամ ԽՍՀՄ ժամանակներում իրենց լուծումները չեն ստացել: Ի՞նչ հիմնախնդիրներ ենք ի վերջո ժառանգել մենք ԽՍՀՄ ժամանակներից ու նրա փլուզմանը հաջորդած տարիներից՝ քարուքանդ եղած, գիշերային ժամերին չլուսավորված փողոցներ, միջպետական, հանրապետական ու մարզային նշանակության անբարեկարգ, դժվարանցանելի ճանապարհներ, վթարված ջրագծեր, քայքայված կամ չգործող ոռոգման համակարգեր, վթարային վիճակում գտնվող դպրոցների կամ մանկապարտեզների շենքեր, անբարեկարգ վիճակում գտնվող մշակույթի տներ, շենքային անբավարարության պայմաններում աշխատող առողջապահական ձեռնարկություններ, սահմանված չափորոշիչներին անհամապատասխան, շրջակա միջավայրն ապականող աղբավայրեր:

Չի եղել մի բնագավառ, որ մենք ժառանգած լինենք առանց խնդիրների, ու հիմա, հինգ տարի անց, չկա բնագավառ, որտեղ առաջընթաց քայլ արձանագրած չլինենք:



Շարունակենք խոսել թվերի լեզվով՝ արդեն ամփոփելով կատարած աշխատանքների ընդհանուր պատկերը: Նույն 2018-2025 թվականների ընթացքում Մարտունի համայնքում պետության ու համայնքի կողմից իրականացված կապիտալ ներդրումները կազմել են 47 միլիարդ 259 միլիոն 680 հազար դրամ, որի առյուծի բաժինը դարձյալ պատկանում է վերջին հինգ տարիներին: Կատարված ներդրումների արդյունքում Մարտունիում իրականացվել է սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության ավելի քան 400 ծրագիր, ինչը համարում եմ աննախադեպ, ահռելի ձեռքբերում: Այդ ներդրումների հաշվին կառուցվել կամ հիմնանորոգվել է համայնքային, մարզային, միջպետական ու հանրապետական նշանակության շուրջ 220 կիլոմետր երկարության ճանապարհ, 301 կիլոմետր խմելու, 186 կիլոմետր 640 մետր ոռոգման ջրատար ցանցեր, 202 կիլոմետր 569 մետր արտաքին լուսավորության ցանց, 14 կիլոմետր 319 մետր գազատար ցանց, մի քանի տասնյակ դպրոցների, մանկապարտեզների շենքեր, մշակույթի տներ, մի քանի տասնյակ կիլոմետրերի հասնող մայթեր: Եվ չկա մի բնակավայր, որտեղ զարգացումն ու առաջընթացը նկատելի չլինեն:

Սակայն համայնքների խոշորացման քաղաքականության առավելության միայն սոցիալ-տնտեսական զարգացման կողմի մեջ չէ: Այն մեծապես, ես կասեի՝ նաեւ մեկընդմիշտ, վերջ դրեց Մարտունու նախկին շրջանի բնակավայրերի մեջ հաճախի նկատվող ներքին տարաձայնություններին, մեկը մյուսին ստորադասելու տգեղ խոսույթին, մեր ժողովրդին ոչ հարիր այլ քայլերի: Մենք, իրոք, դարձանք միախմբված ու կուռ համայնք, որի մարդիկ իրար շատ ամուր կապված են ոչ միայն սիրով ու հարգանքով, այլ նաեւ Ալաշկերտ աշխարհից բերված ազգային ավանդույթներով, բարքառով, մշակույթով, ծեսերով, արյունակցական կապերով: Մեր շատ բնակավայրեր արդեն վաղուց իրար միավորված են թաղամասերով ու տներով, ու մի ժամանակ է գալու, որ այդպես կմիավորվեն մնացած բոլոր բնակավայրերը, նրանց արանքում այլեւս ազատ տարածք, սահման չի մնալու: Մենք ունենք ու կունենանք Հայաստանի Հանրապետության ամենահզոր, ամենաճաղկուն համայնքներից մեկը Սեւանա լճի ափին, գեղատեսիլ լեռների գրկում, կենսասեր ու արարող մարդկանցով, ովքեր անխաթար կերպով պահում, պահպանում ու հզորացնում են Հայկականությունը, հայկական սրբազան ու հինավուրց աշխարհը:

Հարց- Ի՞նչ էական ձեռքբերումներ արձանագրվեցին կրթության, առողջապահության, եւ մշակույթի ոլորտներում

Պատասխան- Ես կասեի՝ աննախադեպ ու հսկայական: Ճիշտ է, այս ուղղությամբ հիմնական ներդրումները եղել են պետության կողմից, սակայն համայնքի կողմից կատարված ներդրումներն էլ քիչ չեն: Իսկ որ ամենակարեւորն է՝ ամեն դեպքում շահել են մեր համայնքի բնակիչները, դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները, նախակրթական հաստատությունների դաստիարակներն ու սաները, բուժաշխատողները, առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիները: Ներդրված միլիարդավոր դրամների մեծ բաժինը հենց ուղղվել է դեպի ձեր մատնանշած ոլորտներ: Կառուցվել, հիմնանորոգվել, ժամանակակից գույքով ու պայմաններով ապահովվել են Ծովասարի, Աստղաձորի, Երանոսի, Ծովինարի, Վարդենիկի, Ջոլաքարի, Վաղաշենի մանկապարտեզները, որոնք արդեն նորացված վիճակում վերջին երկու տարիների ընթացքում իրենց դռներն են բացել հազարավոր սաների առջեւ: Ընդ որում, Ծովասարում ու Աստղաձորում առաջին անգամ են մանկապարտեզներ բացվել: Հիմանորոգման ընթացքի մեջ են գտնվում Մարտունի քաղաքի թիվ 2,3, 4, Արծվանիստի, Ջորագյուղի մանկապարտեզները:

Կառուցման կամ հիմնանորոգման ընթացքի մեջ են գտնվում Երանոսի թիվ 2, Գեղհովիտի թիվ 2, Ծովինարի միջնակարգ, Մարտունու թիվ 2, Ջորագյուղի հիմնական դպրոցների, Մադինայի կրթահամալիրի շենքերը: Մադինայի կրթահամալիրի շահագործման պարագայում այստեղ լուծում կստանա նաեւ մանկապարտեզի բացման խնդիրը, որից հետո արդեն մեր համայնքի բոլոր բնակայրերն ապահովված կլինեն գործող մանկապատրեզներով: Լեռնակերտի նորակառույց դպրոցը գրեթե պատրաստ է շահագործման: Ներքին Գետաշենի միջնակարգ դպրոցի կառուցումը ժամանակավորապես ընդհատվել է շինարարի կողմից թույլ տրված խախտումների ու դատական պրոցեսների արդյունքում: Հուսանք, որ խնդիրները կկարգավորվեն առաջիկայում: Վերանորոգվել ու արդի չափորոշիչներին համապատասխանեցվել են Վարդաձորի, Վաղաշենի, Ծակքարի, Ջոլաքարի թիվ 2 միջնակարգ դպրոցները, Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճն ու նրան կից մասնաշենքը:

Պետությունը հսկայական քայլեր է կատարել մեր համայնքում առողջապահական համակարգի նորացման ու զարգացման ուղղությամբ: Այստեղ ներդրված գումարի չափը հատում է 4 միլիարդ դրամը, որից 3 միլիարդ 400 միլիոն դրամը բաժին է ընկնում Մարտունու բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցմանն ու վերազինմանը: Մնացած մասը բաժին է ընկնում Ծակքարի եւ Վաղաշենի ԱԱՊԿ ու Վարդենիկի առողջության կենտրոնի նոր շենքերի կառուցմանը:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ու Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտալ խորհրդի միջեւ կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում հիմնանորոգվել ու վերազինվել են Ծովինարի, Վերին Գետաշենի ու Երանոսի բուժամբուլատորիաների շենքերը:

Այս քայլերի շնորհիվ մեր քաղաքացիներն արդեն կարողանում են իրենց բուժումը ստանալ տեղում՝ ազատվելով մայրաքաղաքի բուժհաստատություններ դիմելու նախկին հոգսերից ու ավելորդ ծախսերից:

Հիմնանորոգվել են Ծակքարի, Ջորագյուղի, Ջոլաքարի, Վաղաշենի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Ծովինարի, Գեղհովիտի մշակույթի տները, Վարդենիկի երաշտական դպրոցի եւ մշակույթի տան շենքը, մեկնարկել է Մարտունու կենտրոնական գրադարանի շենքի կառուցումը: Սա առավել քան կարեւոր ձեռնարկ է, քանի որ գրական հսկայական ֆոնդի պահպանումը շատ վաղուց մեզ համար դարձել էր օրախնդիր հարց:

Այս ահռելի ծավալի աշխատանքներն իրականություն չէին դառնա, եթե մենք ամեն քայլափոխին չզգայինք ՀՀ կառավարության ու Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի աջակցությունը, մեր մշտական համագործակցությունը:

Օգտվելով առիթից, ուզում եմ իմ ու Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի, Մարտունու ազգաբնակչության անունից մեր երախտագիտությունը հայտնել ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանին, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին, ՀՀ կառավարության անդամներին, մեզ հետ համագործակցած բոլոր գերատեսչություններին՝ մշտապես մեր կողքին լինելու, յուրաքանչյուր բարձրացված խնդրին անմիջապես արձագանքելու համար:

Հարց- Մարտունի համայնքն ունի բավականին բազմամարդ ու ներկայանալի Սփյուռք: Որքանո՞վ է համայնքապետարանը դարձել կապող օղակ՝ Սփյուռքի գործարար մարդկանց ներդրումային կամ բարեգործական ծրագրերում ներգրավելու համար:

Պատասխան - Այո, մենք արտերկրում ունենք բազմամարդ Սփյուռք, որի ներկայացուցիչները հեռաքրքրված են իրենց ծննդավայրում ձեռնարկներ իրականացնելու հարցերով: Մենք խրախուսում ենք ինչպես բարեգործական ձեռնարկները, այնպես էլ՝ ներդրումային ծրագրերը:

Բնական է, որ ցանկացած բարեգործություն ինքնին ողջունելի է, սակայն մեզ համար առավել կարեւոր է մեր Սփյուռքի ներկայացուցիչներին տեսնել ներդրումային ծրագրերում, ձեռնարկատիրական գործունեության մեջ, քան թե բարեգործական ձեռնարկներում: Որովհետեւ մենք մեր համայնքի զարգացումը շատ ավելի շաղկապում ենք նոր ձեռնարկությունների հիմնման, բազմաթիվ կայուն աշխատատեղերի ստեղծման, արտադրական կարողությունների ավելացման ու հզորացման, տնտեսական վերելքի հետ, ոտեղ բարեգործական քայլերը գրեթե դեր խաղալ չեն կարող: Իսկ ահա կայուն, օրենքով պաշտպանված ձեռնարկչատիրությունը միանգամայն կարող է փոխել իրավիճակը՝ խթանելով տնտեսության զարգացումը: Եվ որքան էլ մենք ոգեւորված ենք մեր համայնքի ծաղկմամբ, կառուցապատմամբ, ենթակառուցվածքների ուժեղացմամբ, առողջապահական ու կրթական հաստատությունների արդիականացմամբ, մարդկանց կենսապայմանների բարելավմամբ, այդուհանդերձ, առանց կայացած ու զարգացող տնտեսության մերօրյա ձեռքբերումները չեն կարող լրացնել կամ բավարարել մեր պետության ու երկրի հզորացման պահանջները:

Վերջին տարիների ընթացքում Սփյուռքի մեր հայրենակիցներից մենք ստացել ենք բազմաթիվ դիմումներ հողհատկացումների ու ձեռնարկչատիրական գործունեություն ծավալելու վերաբերյալ: Սա արդեն փաստում է, որ հայրենիքում ապրելու ու գործունեություն ծավալելու համար շատերն են ձգտում, որ դեպի հայրենիք ներգաղթի շարժ է նկատվում: Նրանք հողեր են ուզում ձեռք բերել՝ արեւային ֆոտովոլտային կայաններ, բազմաբնակարան շենքեր կառուցելու, ինտենսիվ այգիներ, խելացի անասնագոմեր հիմնելու, ձեռնարկչատիրական այլ գործունեություն ծավալելու համար, ինչին մենք ընդառաջում ենք օրենքով սահմանված կարգով: Շատ մոտ ապագայում մենք կտեսնենք արդյունքները:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

20.qxd 08/10/2026 15:56 Page 5

ՉԿԱ ԱՎԵԼԻ ՎԵՀ ԳՈՐԾ, ՔԱՆ ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԻ ՇԵՆԱՅՈՒՄՆ Է

«Գեղամա աշխարհ» թերթի հարցազրույցը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանի հետ

/սկիզբը՝ էջ 1-ում, 4-ում/

Բարեգործական քայլերը եւս առկա են, սակայն կուզեի առանձնացնել Մադինայի նախկին բնահյ, արտերկրում գործարարությամբ զբաղվող Մհեր Բաղդասարյանի օրինակը: Նա իր անձնական միջոցներով կառուցեց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Մինչ այդ մադինան մեր համայնքի միակ բնակավայրն էր, որտեղ եկեղեցի կառուցելու խիստ անհրաժեշտություն կար: Եկեղեցու բացումը վերածվեց համաժողովրդական տոնախմբության:

Բարեգործությունը մարդուն գեղեցկացնող, փառաբանող երևույթ է, սակայն հարկ է ավելացնել, որ բարեգործությամբ մեր երկիրը, մեր համայնքը չեն կարողանա ընթանալ դեպի զարգացում ու արժանապատիվ կյանք, իսկ բիզնես ներդրումների միջավայրի ընդլայնումը կարող է ապահովել շատ ավելի ցանկալի ու տեսանելի արդյունքներ:

Հարց- Ի՞նչ ձեռքբերումներ կան արձանագրված մասնավոր ներդրումների ոլորտում :

Պատասխան-Առաջին էական ձեռքբերումը արեւային ֆոտովոլտային 3 կայանների հիմնումն է Աստղաձոր գյուղում: Ներդրումներ կատարել են

« Ա-Ս էներջի», «Պրոմ Սան», «Բարի արեւ» ընկերությունները: Ընդհանուր ներդրումը կազմել է 10 միլիոն 590 հազար ԱՄՆ դոլար: Երեք կայանների դրվածքային ընդհանուր հզորությունը կազմում է 15,9 մեգավատտ ժամ:

Այժմ 20 մեգավատտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայան է կառուցվում Ծովինար գյուղում: Առաջիկա տարիներին այս ուղղությամբ կունենանք շատ ավելի խոշոր արդյունքներ, քանի որ մի քանի բնակավայրերում եւս այս պահին նախապատրաստվում են հերթական նմանատիպ ծրագրերի իրականացմանը: Նկատելի մասնավոր ներդրումային ծրագրեր են կյանքի կոչվելու նաեւ գյուղատնտեսության ոլորտում:

Հարց- Ի՞նչ ձեռքբերումներ են արձանագրվել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

Պատասխան- Առաջին լուրջ ձեռքբերումն այն էր, որ վերջապես շահագործվեց Հայաստանում առաջին սանիտարական աղբավայրը Հրազդանում, ուր հավաքվում ու տեղափոխվում է Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերի կենցաղային աղբը: Մարտունի համայնքը 2026 թվականից անցել է կենտրոնացված աղբահանության: Այս գործընթացի շնորհիվ, որն իրականացվեց ՀՀ կառավարության ջանքերով, Մարտունի համայնքում արդեն փակվեցին նախկինում գործող բոլոր աղբավայրերը: Դրանք լիովին հողածածկված են մեր հնարավորություններով ու միջոցներով եւ այլեւս շրջապատի ու Սեւանա լճի համար աղտոտման վտանգ չեն ներկայացնում:

Քայլեր են ձեռնարկվել նաեւ Սեւանա լճի ջրերի մաքրության պահպանման ուղղությամբ: Այժմ Մարտունի քաղաքում ու Գեղհովիտ գյուղում կառուցվում են կեղտաջրերի մաքրման կենսաբանական փոքր կայաններ, որոնք էականորեն կնվազեցնեն Սեւանա լճի ջրերի աղտոտման վտանգը:

Բացի այդ, Մարտունի համայնքում կոյուղագծերի եւ կենսաբանական մաքրման կայանների կառուցման նպատակով Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ այժմ ընթանում է նախագծման գործընթաց, ինչը նշանակում է, որ առաջիկա տարիներին մենք կունենանք կենսաբանական մաքրման նոր կայաններ, կոյուղացված խոշոր բնակավայրեր, ինչի շնորհիվ նվազագույնի կհասցվեն Սեւանա լճի ջրերի, Սեւան թափվող գետերի աղտոտման հիմնական գործոնները:

Հարց- Ի՞նչ ծրագրեր մնացին անավարտ կամ կես ճանապարհին, որոնք պետք է շարունակվեն հերթական 5 տարիների ընթացքում:

Պատասխան- Եթե մենք խոսում ենք մեր պաշտոնավարման տարիների ընթացքում իրականացված 400 ծրագրերի մասին, ապա հաշվի առնք, որ այժմ ընթացքում դարձյալ մի քանի տասնյակ ծրագրեր կան, որոնց մի մասն այժմ իրականացման, մի մասն էլ մեկնարկային փուլում են: Բացի ընթացքի մեջ գտնվող ծրագրերը, որոնց մասին արդեն հիմնականում խոսեցինք, շուտով սկսվելու են նոր ծրագրերը, որոնց մրցույթներն արդեն կայացել են, հաղթող կազմակերպություններն էլ՝ ի հայտ եկել: Հենց այս տարվա հոկտեմբեր ամսից էլ սկսվելու են շինարարական աշխատանքները, որոնց պայմանագրային ընդհանուր արժեքը կազմելու է 8 միլիարդ 255 միլիոն դրամ, որից խնելու ջրամատակարարման համակարգի կառուցման կամ նորացման ուղղությամբ կծախսվի 3 միլիարդ 155 միլիոն դրամ, ոռոգման համակարգերի կառուցման ուղղությամբ՝ 2 միլիարդ 756 միլիոն դրամ, ճանապարհների հիմնանորոգման համար՝ 2 միլիարդ 344 միլիոն դրամ: Բնական է, որ մեկնարկող ծրագրերի համար ավարտի ժամանակաշրջան կսահմանվի 2027 թվականը:

Սուբվենցիոն ծրագրերից զատ շինարարական աշխատանքները շարունակվում են նաեւ պետական միջոցներով, որոնց մոտ ապագայում կգումարվեն նորերը՝ շատ ավելի խոշոր ներդրումային չափերով ու հանրային հնչեղությամբ:

Առաջին հերթին դա վերաբերում է Մարտունի քաղաքում մարզական համալիրի ու ֆուտբոլի ակադեմիայի կառուցմանը: Մենք մեր իրավասության շրջանակներում կատարեցինք պահանջվող քայլերը հողհատկացման ուղղությամբ: Իսկ այժմ ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում այս կարեւոր կառույցների շինարարական աշխատանքների մեկնարկը տալու ուղղությամբ: Մարտունու մարզական համալիրի կառուցման մրցույթը հայտարարվել է 2 միլիարդ 320 միլիոն դրամ նախագծանախահաշվային արժեքով: Մրցույթը հայտարարվել է արդեն երկրորդ անգամ, քանի որ առաջին դեպքում մասնակիցներ չեն եղել:

Ֆուտբոլի ակադեմիայի կառուցման շինարարական մրցույթն էլ շուտով կկայանա, այն այժմ նախագծման փուլում է: Ֆուտբոլի ակադեմիան ունենալու է 2 խաղադաշտ, 2 տրիբունայով, միջազգային չափորոշիչներին համապատասխան: Սա նշանակում է, որ Մարտունին շատ շուտով կարող է ընդունել նաեւ միջազգային մարզական մրցաշարեր, իսկ մանկապատանեկան ֆուտբոլը կգտնվի զարգացման այլ մակարդակի վրա: Առհասարակ, մեր համայնքում շատ մարզածեւեր աննախադեպ զարգացում կապրեն, մարզական հաջողությունները կուղեկցեն մեր շնորհալի մարզիկներին:

Իմ հաջորդ ակնկալիքը կապված է Ուրցաձոր-Մարտունի հանրապետական նշանակության ճանապարհի կառուցման մեկնարկի հետ: Տարիներ շարունակ ՀՀ կառավարության ջանքերով ընթացել են նախագծման աշխատանքներ, քանի որ գործ ունենք չափազանց բարդ տեղանքի հետ, սակայն, ի վերջո, մոտեցել է ժամանակը, որպեսզի վերջապես իրականություն դառնա մեր երկրի, մարզի ու համայնքի համար չափազանց պահանջված ու կարեւոր այս ծրագիրը, որով մեր մարզն ու համայնքը ուղիղ գծով ու համեմատաբար կարճ ճանապարհով կապվելու են Արարատի մարզի ու Արարատյան դաշտավայրի բնակավայրերի հետ: Այդ ճանապարհի շահագործումը մեզանում մեծապես կխթանի գյուղատնտեսության ու զբոսաշրջության զարգացումը: Այստեղ եւս խոսքը մի քանի միլիարդ դրամի ներդրման մասին է:

Հաջորդ ակնկալիքիս կապված է ջրամբարաշինական ծրագրերի հետ, որոնց մասին տարիներ շարունակ քննարկումներ են ընթանում ՀՀ կառավարությունում: Խոսքս Աստղաձոր ու Արգիճի գետերի վրա հիմնվելիք ջրամբարների մասին է: Նման ջրամբարների կառուցումը, որոնք դարձյալ ենթադրում են տասնյակ միլիարդավոր դրամների ներդրումներ, տնտեսական ու բնապահպանական հսկայական նշանակություն ձեռք կբերեն համայնքի բնակավայրերի համար: Դրանք հիմնովին կապահովեն մեր բնակավայրերի ոռոգման ինքնահոս ջրամատակարարումը, էականորեն կկրճատեն Սևանա լճից մեխանիկական եղանակով մղվող ջրի քանակն ու էլեկտրաէներգիայի ծախսերը:

Դեռ մեր համայնքի շատ դպրոցական շենքեր կառուցման կամ արդիականացման կարիք ունեն, շատ ճանապարհներ՝ հիմնանորոգման կարիք, շատ թաղամասեր՝ գիշերային լուսավորության կարիք: Այդ հիմնախնդիրները պետք է դառնան ծրագրեր ու նախագծեր:

Հարց-Որոնք են լինելու առաջնահերթ ու հրատապ անելիքներն առաջիկա 5 տարիների ընթացքում, եթե Ձեզ հաջողվի երկրորդ անգամ ընտրվել համայնքի ղեկավարի պաշտոնում:

Պատասխան- Այս տարվա գարնանը համայնքապետարանի աշխատակազմի կողմից մեր ցուցումով գույքագրվել են համայնքի բոլոր բնակավայրերի հիմնախնդիրները: Հանդիպումներ են կազմակերպվել բոլոր բնակավայրերի բնակիչների հետ, տեղում քննարկվել են բարձրացված հարցերը, վեր հանվել առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, որոնք և ներառվել են մեր ապագա ծրագրերում: Իսկ դրանք դարձյալ բազմազան են ու բազմաբնույթ: Մի տեղ ոռոգման համակարգի, մի տեղ խմելու ջրի մատակարարման, մի տեղ լուսավորության ցանցի կառուցման խնդիր կա, մի այլ տեղ՝ մշակույթի տան, երկրորդ մանկապարտեզ ունենալու, ասֆալտապատ ճանապարհ ու մայթ ունենալու խնդիր:

Եվ չկա մի բնակավայր, որտեղ այդ խնդիրները գույքագրված չլինեն, բնակիչների կարծիքները հաշվի առնված չլինեն: Բնական է նաեւ, որ ամեն մի խնդրի լուծում, ամեն մի ծրագիր միջոց ու ժամանակ է պահանջում: Սակայն կարեւոր է, որ մենք ոչ մի դեպքում չդանդաղենք, չքերանանք, այլ միշտ լինենք հետեւողական ու ոչ մի գործ չթողնենք կես ճանապարհին: Բայց մի բան հաստատ է, որ եթե ինձ ու մեր քաղաքական թիմին հաջողվի հաղթել հերթական ընտրություններում, ապա Մարտունի համայնքի բնակավայրերում կշարունակեն գործել տասնյակ ու հարյուրավոր շինհրապարակներ, կյանքի կկոչվեն տարիներ ի վեր կուտակված հիմնախնդիրներին լուծում տվող բազմաթիվ կենսական նշանակության ծրագրեր, մեր համայնքը կշարունակի ծաղկել ու բարգավաճել, գեղեցկանալ ու հզորանալ, մի իրողություն, որին մարդիկ ականատես են լինում տարիներ շարունակ:

Հարց-Քանի՞ տոկոսով են կատարված Ձեր նախընտրական խոստումները, եւ ի՞նչ զգացողությամբ ու պատասխանատվությամբ եք գնում նոր ընտրությունների:

Պատասխան- Մենք հերթական ընտրություններին գնում ենք շատ ինքնավստահ, համարձակ, մեր անելիքներից ու ձեռքբերումներից գոհ, պարզ ու բաց երեսով, քանի որ մեր նախընտրական խոստումները կատարել ենք ամբողջովին ու մի բան էլ առաջ ընկել մեր խոստացած ծրագրերից:

Ասեմ, որ քարոզարշավն էլ շատ հեշտ, քիչ ջանքերի գործադրմամբ կտանենք, քանի որ հիմնական ջանքերը մենք ժամանակին դրել ենք հետեւողական աշխատանքի մեջ: Չկա մի բնակավայր, մի թաղամաս, մի տուն, որտեղ մարդիկ զգացած չլինեն պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծարար, կյանքի որակը բարձրացնող, տուն ու հայրենիք կառուցող ներկայությունը: Սրանից էլ արդյունավետ քարոզչություն ինչպե՞ս կարող է լինել, երբ մարդիկ ամեն օր ու ժամ տեսնում են, թե ինչպես են հրաշքի պես իրենց աչքերի առջեւից չքանում նախկին ցեխակոլոլ, փոշոտ, դարուփոս, գիշերվա մթության մեջ կորած փողոցները ու փոխարենը վեր են բարձրանում ասֆալտապատ, բարեկարգ ճանապարհները, սալիկապատ մայթերը, գիշերային լուսավորության համակարգերը, թե ինչպես են նորացվում, գեղեցկանում ու վերազինվում դպրոցների, մանկապարտեզների, բուժհիմնարկների շենքերը, թե ինչպես են ոռոգելի դառնում հարյուրավոր ու հազարավոր հեկտարներ կազմող անջրդի վարելահողերը, ինչպես են նորացվում խմելու ջրի մատակարարման համակարգերը: Չկա մի ծրագիր, մի խոստում, որտեղ մեզ կարող են մեղադրել խաբելու կամ թերանալու մեջ:

Այնպես որ, մեր կատարածը յուրօրինակ ու բացառիկ հաշվետվություն է մեր ժողովրդի մեր ընտրողների առաջ: Իրենք էլ լավ գիտեն, թե ով է իրական կառուցողը եւ ով է երկիր ավերողը:

Ժողովրդի տված գնահատականը մենք տեսանք այս տարվա հունիսին կայացած ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում, երբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը կարողացավ կրկին ապահովել խորհրդարանական մեծամասնություն ու ձեռք բերել կառավարություն կազմելու իրավունք:

Մեր ընտրողները քաջ գիտեն նաեւ, թե ինչ ենք մենք ծրագրել առաջիկա տարիներին, ինչ հիմնախնդիրների լուծումներ ենք դրել մեր առջեւ, ինչպիսի պատասխանատվություն ենք ստանձնել: Այս առումով էլ համոզված եմ, որ այս անգամ էլ պատվով ենք դուրս գալու ՏԻՄ հերթական ընտրություններում, հաղթողի, առավել շատ ձայներ հավաքողի կարգավիճակում:

Հարց-Ի՞նչպես եք պատկերացնում Մարտունի համայնքը 5 տարի հետո, եթե Ձեզ կրկին հաջողվի ստանձնել նրա ղեկավարման պատասխանատվությունը: Ի՞նչ զգացողություն ունեք հայրենաշինության մեջ ձեր ներդրած ավանդի շուրջ:

Պատասխան – Անկեղծ ասած, երբ 5 տարի առաջ ստանձնում էի Մարտունի համայնքի ղեկավարի բարդ ու պատասխանատու աշխատանքը, չէի էլ պատկերացնում, որ մեր քաղաքական թիմով, մեր աշխատակազմով, ՀՀ Կառավարության ու Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ համագործակցությամբ նման հսկայածավալ աշխատանքներ կկարողանանք իրականացնել: Հիմա, երբ բոլոր գործերը իրական հողի վրա են, բոլորի համար տեսանելի, դարձյալ չեմ կարողանում պատկերացվել, թե 5 տարի անց որքան բան կհասցնենք անել: Բայց հաստատ հավատում եմ, որ մինչ մեր հաջորդ պաշտոնավարման ավարտը Մարտունի համայնքը կլինի շատ ավելի ծաղկուն, գեղեցիկ, տնտեսապես ավելի հզոր, զարգացած, մարդաշատ, հանրահռչակված:

Ի՞նչ զգացողություն ունեմ հայրենաշինության մեջ ունեցած իմ ավանդի շուրջ: Երբ ամեն անգամ մենք մի հաստատության կամ նորոգված ճանապարհի, հանրային այլ կառույցների բացման ժապավեններ ենք կտրում Հայաստանի Հանրապետության վարչապետի, նախարարների կամ Գեղարքունիքի մարզպետի ու այլ պաշտոնյաների հետ, ինձ մի զարմանալի հուզմունք ու ուրախություն է պատում, մի անսահման հպարտություն այն բանի համար, որ մեզ հաջողվում է դարերի ու սերունդների համար մնայուն գործեր թողնել, շեն ու նորոգ հայրենիք: Միեւնույն է, պատմությունն արձանագրելու է բոլոր կառուցողների անունները: Բայց շատ ավելի մեծ ձգտում է ծնվում իմ ներսում՝ շարունակելու այն առաքելությունը, որին նվիրվել եմ շատ տարիներ առաջ՝ սկսած Վարդենիկ համայնքի ղեկավարի պաշտոնից և Մարտունի խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնում վերջացրած: Ես առավել քան համոզված եմ, որ տասնյակ տարիների իմ կուտակած փորձը համայնքի ղեկավարի բարդ ու պատասխանատու պաշտոնում ավելի արդյունավետ կարող է ծառայել հայրենաշինությանը, մեր համայնքի բարօրությանը, ու այդ համոզմունքն էլ արդեն ինձ պարտավորեցնում է հերթական անգամ մասնակցել ընտրություններին, ստանալ ժողովրդի քվեն ու շարունակել նույն առաքելությունը՝ հայրենի երկրի կառուցումն ու վերաշինումը: Ես քաջ գիտակցում եմ, թե ինչ կարեւոր ոլորտում եմ ներդրել իմ ջանքերն ու կարողությունները եւ դեռ որքան կարող եմ պիտանի լինել հայրենակերտման սուրբ գործին:

Հարցազրույցը վարեց
Խոսրով Խլղաթյանը

20.qxd 08/10/2026 15:56 Page 6

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԽՈՐԱՆԱՇԱՏ ՎԱՆՔ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Հետո ճանապարհի մի որոշ հատված անցնում ենք թանձր մառախուղի միջով, որը շատ պինդ նստել է բարձրաբերձ ժայռերի կատարներին ու թավ անտառի վրա: Մեր հայացքները որսում են նաեւ թափառող մեգը մեր դիմացի ժայռերի ու անտառապատ լանջերի վրա:

Հետո վերջանում են անտառները, ու մենք մտնում ենք Արծվաբերդ, ապա Այգեձոր ու Չինարի: Սիրտս սկսում է ավելի արագ ու հուզմունքով բաբախել, քանի որ, Թաթուլի ասելով, արդեն շատ ենք մոտեցել Խորանաշատին: Նույնիսկ նա ձեռքը պարզում է դեպի արեւելքում բարձրացող լեռնալանջ ու ցույց տալիս վանքը:

Մեզ շատ մոտիկ երեւում են նաեւ Հայաստանի Հանրապետության պաշտպանական դիրքերը, որոնցից քիչ այն կողմ էլ, բնական է, արդեն մեր հակառակորդի դիրքերն են:

Փաստորեն, Խորանաշատն այս պահին սոսկ վանք, պատմաճարտարապետական ու պատմամշակութային համալիր չէ. այն հավերժական հայկական ազգային ամրոց ու տաճար է՝ վեհորեն կանգնած հայկործան բանակների, պատմության կեղծարարների սին ու ստոր, նենգ դավերի առաջ: Անգամ կիսավեր վիճակի մեջ Խորանաշատը փայլում է իր գեղեցկությամբ, ճարտարապետական կուռ, բացառիկ կառուցվածքով, հիասքանչ քանդակներով, ամենակարեւորը՝ հայատառ վիմագրություններով, որոնք ոչ մի կասկածի տակ չեն դնում այս հուշարձանի հայկականությունը, որքան էլ մեր հողի ու արյան թշնամիները հազար ու մի տեսակ «Ալբանական» կամ այլ կեղծ տեսություններ հորինեն ու հրամցնեն քրիստոնյա երկրների կրթված, բայց եւ միաժամանակ «ուխտի ականջում քնած» ու նավթադոլարնե-

րի փայլով շլացած դիվանագետներին, ինչպես որ եղավ ընդամենը օրեր առաջ, բռնազավթված Գանձասարի վանքում:

Հենց հյուսիսային մուտքի կողմից արդեն մարդկային աչքերը շլացնում են Խորանաշատի սրբատաշ քարերով շարված պատերը, քանդակները, քարե սյունազարդ կամարները, 12 խորանները, կիսավեր թմբուկը, ներքին ու արտաքին ձեւավորումները, գմբեթները:

Մի քանի անգամ պտտվում եմ Խորանաշատի շուրջ՝ հայացքս չկտրելով քարեղեն այս հրաշքից ու սրբացած հուշարձանից: Մի քանի անգամ ներս եմ մտնում՝ հիանալու ճարտարապետների ու շինարար վարպետների անկրկնելի շնորհներով ու հանճարով, սակայն հասկանում եմ, որ օրերն ու տարիները շատ քիչ կլինեն՝ այս հանճարեղ կառուցողների մտքի խիզախումներն ու թռիչքները հիմնովին պատկերացնելու համար:

Հասկանում ու համոզվում եմ միայն, որ դարերի մեջ անմահացած այս մարդիկ Աստծո հզոր տուն են կառուցել՝ Աստծո ճաշակին համահունչ, Աստծո չափ կատարյալ ու գեղեցիկ:

Հետո միայն, տունդարձի ճանապարհին ու նրան հաջորդող օրերի ընթացքում գրականությունից տող առ տող թերթում ու ուսումնասիրում եմ Խորանաշատի կառուցվածքն ու փառահեղ պատմությունը, որը եւ սիրով հանձնում եմ ընթերցողների ուշադրությանը:

Խորանաշատը կառուցվել է 13-րդ դարի սկզբներին: Այս հրաշքի հիմնադիրը Վանական Վարդապետն է, ով հիմարվում է հայ միջնադարյան նշանավոր հոգեւոր այրերից ու պատմագրական գործիչներից մեկը:

Նա մեկն է այն աստվածատուր հայերից, ով հոգով, սրտով ու գրչով է մաքառել հայրենի գրի, մշակույթի ու հավատի պահպանման համար՝ մոռացած իր անձն ու կյանքի վայելքները: Ու, չնայած նվաճող հորդաների եղկելի ներկայությանը, Վանական Վարդապետը չի նահանջել ոչ մի արհավիրքի, ոչ մի դժվարության ու աղետների առաջ:

Վանական Վարդապետը ծնվել է 1181 թվականին: Հայտնի է որպես նշանավոր աստվածաբան, մեկնիչ, մատենագիր, մանկավարժ, պատմագիր եւ տոմարագետ: Ուսանել է Նոր Գետիկի դպրոցում, 1201 թվականին ձեռնադրվել է քահանա, դարձել Մխիթար Գոշի աշակերտն ու օգնականը: 1207–1208 թվականներին ստացել է վարդապետի աստիճան, այնուհետեւ վերադարձել Տավուշ, ուր Վահրամյան իշխանների դրամական հովանավորությամբ հիմնադրել է Խորանաշատի վանքը : Որոշ բանասերներ վանքի կառուցումը նշում են 1191 թվականը, սակայն վանքի վրա պահպանված շինարարական չորս արձանագրությունները կրում են 1211, 1216, 1220 եւ 1222 թվականները:

Խորեզմի շահ Ջալալեդդինը, դեպի Թբիլիսի կատարած իր արշավանքների ճանապարհին, 1225 թվականի վերջերին ավերել է նաեւ Խորանաշատ վանքը: Հովհաննես Տավուշեցին իր մի խումբ սաների հետ փախել է՝ իր հետ տանելով վանքի ձեռագիր գրքերն ու թանկարժեք սպասքները: Նրանք գնացել են վանականի հայրենի գյուղը եւ Ոլորուտ գյուղի դիմաց, ժայռի մեջ փորել քարանձավ, որի մեջ հիմնել են նաեւ եկեղեցի եւ շարունակել ուսուցումը: Իսկ երբ ուսկնդիրների թիվը շատացել է ու քարանձավի տարածը չի բավարարել, նրանք իջել են քարափի ստորոտը եւ կառուցել իրենց համար բնակելի շենքեր եւ եկեղեցի:

1235–1236 թվականներին մոնղոլական արշավանքի ժամանակ Վանական Վարդապետը գերեվարվում է, իսկ մի քանի ամիս անց 80 դահեկան փրկագնով ազատ արձակվում՝ շարունակելով իր ուսումնամանկավարժական գործունեությունը Խորանաշատի վանքը վերականգնելուց հետո: 1240 թվականին Ներքին Խաչենի իշխան Հասան Ջալալ Դոլայի հրավերով նա մասնակցել է Գանձասարի վանքի օծմանը:

Մոնղոլական զորաբանակից մի զորախումբ, Մոլար Նուհինի գլխավորությամբ, Շամքոր քաղաքի վրայով առաջ է շարժվել Տավուշ գետի վրայով եւ 1236 թվականի ամռան սկզբներին գրավել Տավուշ ամրոցը : Հովհաննես Տավուշեցին իր աշակերտների եւ գյուղի բնակիչների հետ փախել ու թաքնվել են ժայռերում: Մոնղոլ զավթիչները պաշարել են ժայռերը եւ նրանց գերի վերցրել: Այդ ամենին մասնակցել է նաեւ Կիրակոս Գանձակեցին, որը թողել էր Գոշավանքը եւ եկել աշակերտելու Վանական Վարդապետի մոտ: Ըստ Գանձակեցու՝Վանական Վարդապետը հանդիպել է մոնղոլ հրամանատարի հետ՝ գերիներին բաց թողնելու նպատակով, սակայն նա կողոպտվել է եւ նույնպես գերեվարվել: Գերիներից որոշներին հաջողվում է փախչել, իսկ որոշներին մոնղոլները տանջամահ են արել:

Վանական Վարդապետը գործուն մասնակցություն է ունեցել իր ժամանակի դավանաբանական կնճռոտ հարցերի քննմանը: Այսպես, 1250 թվականին նա բանադրել է Դավիթ Ծարեցու 13-րդ դարի 40–50-ական թվականների գլխավորած աղանդավորական շարժման մասնակիցներին:

Վանական Վարդապետը մահացել է 1251 թվականի մարտի 18-ին եւ, իր կտակի համաձայն, թաղվել իր կառուցած վանքի մերձակայքում գտնվող աղբատների գերեզմանոցում:

Վանական Վարդապետի աշակերտներից են Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Ակներցին եւ այլ նշանավոր գործիչներ: Հեղինակել է հարուստ ու բազմաբովանդակ գրական ժառանգության, այդ թվում՝ Հայաստանի պատմության շարադրությունը սկզբից մինչեւ իր ապրած օրերը, որը մեզ չի հասել:

Վանական Վարդապետի աստվածաբանական երկերից արժանահիշատակ են Հոբի գրքի մեկնությունը, «Բացատրություն աղօթից Ամբակումա մարգարէի» «Համեմատութիւն Հին Կտակարանայ ի Նորս», «Տեսութիւն շարականին Ուրախացիր պսակ կուսից», «Մեկնութիւն սաղմոսին Այսծով Մեծ», «Խրատ դաւանութեան»,«Պատճառք վասն առաջաւորաց պահոց», «Յաղագս տարեմտին» գրվածքները: Գրել է նաեւ աստղաբաշխությանը եւ տոմարագիտությանը վերաբերող երկեր՝ օգտվելով Անանիա Շիրակացու աշխատություններից, որոնք հավելել է իր դիտարկումներով:

Վանական Վարդապետի գրչին է պատկանում նաեւ «Հարցմունք եւ պատասխանիք» ծավալուն երկը, որն ըստ էության ուսումնական ձեռնարկ է, պարունակում է բոլոր այն գիտելիքները, որոնք պարտավոր էին սերտել ուսման սկզբում նրա վարդապետարանի աշակերտները: «Հարցմունք եւ պատասխանիք»-ն ամփոփում է 13-րդ դարի հայ իրականության պատկերացումներն ու իմացությունը պատմության, ազգագրության, հավատալիքների, իմաստասիրության, մատենագրության, մատենագիտության, կենսաբանության, բուսաբանության, բժշկագիտության, աստղաբաշխության, երաժշտագիտության, բառագիտության, քերականագիտության, դավանաբանության, աստվածաբանության եւ այլնի վերաբերյալ:

Խորանաշատի վանական համալիրը բաղկացած է Սուրբ Աստվածածին, Սուրբ Կիրակի, Սուրբ Ճգնավոր եկեղեցիներից, գավթից եւ օժանդակ շինություններից:

Սուրբ Աստվածածին եկեղեցին համալիրի գլխավոր շինությունն է: Ունի իշխող դիրք հուշարձանախմբի եւ շրջակա միջավայրի վրա: Պատկանում է գմբեթավոր դահլիճ տիպին: Արտաքինից ուղղանկյուն (12.7 մ x 11 մ), ներքուստ խաչաձեւ հատակագծով, բեմի երկու կողմերում կրկնահարկ ավանդատներով կառույց է:

Եկեղեցու հիմնադրման ժամանակի մասին մատենագրական եւ վիմագրական աղբյուրներում ոչինչ չկա: Համաձայն եկեղեցու արեւմտյան մուտքի վերնամասի արձանագրության, մուտքը կառուցել է ոմն Սերոբի հովանավորությամբ՝ 1211 թվականին: Շինարարական մյուս վիմագրերը վերաբերվում են 1216 եւ 1220 թվականներին, որտեղ ասվում էր, որ Վահրամ Կանաչոզեցիի եւ Ավելդատ Սրտժեցիի միջոցներով կառուցվել է եկեղեցու երկու ավանդատները: Ելնելով այն հանգամանքից, որ վանքի մուտքը կառուցվել է եկեղեցու հետ միաժամանակ, ինչպես նաեւ եկեղեցու բարդ ճարտարապետությունը հաշվի առնելով, ենթադրվում է, որ Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1211 թվականին:

Կառուցումը ավարտվել է ամենաուշը 1221 թվականին, քանի որ 1222 թվականից սկսվել է գավթի շինարարությունը:

Եկեղեցու հյուսիսային եւ հարավային պատերի արեւմտյան կողմերից դուրս են ընկած նիստավոր որմնամույթերը, որոնք ավարտվում են բարդ տրամատի խոյակներով: Խոյակների շարունակությունը կազմող հորիզոնական գոտիները թաղերն անջրպետում են ուղղահայաց պատերից, իսկ ավագ խորանի կիսագլանաձեւ մակերեւույթը՝ գմբեթարդից: Որմնամույթերը միմյանց հետ հաջորդաբար կապված են կիսաշրջանագծային կրկնակի կամարներով, որոնց ստեղծած քառակուսի հիմքից առագաստային փոխանցումների միջոցով բարձրանում է բոլորաձեւ կտրվածքով թմբուկը: Թմբուկի ստորին մասը ընդգծված է նկարվածքի գոտիով:

Եկեղեցու ներքին տարածությանը բարձր գեղարվեստական արտահայտչություն է հաղորդում ավագ խորանի կիսաբոլորակ պատի հարդարանքը: Հարդարանքի ստորին մասին խորանիկներ հիշեցնող մշակումների շարք է: 12 Խորանիկները միմյանցից բաժանված են զույգ կիսասյուներով, որոնք կապված են որմնակամարներով: Որմնակամարները խորանիկներին տալիս են կամարակապ վերջավորություններ՝ միաժամանակ պարփակելով դրանց շքաքարային ավարտամասերը: Դրանք պսակված են գլանիկային ձեւափոխումներով նկարված անկյունակների աննըմդհատ շղթայով: Եկեղեցու բեմի ճակատային հարթությունը մշակված է եղել քառաթեւ սրածայր վեցանկյունների եւ քառակուսի քարերի որոշակի համադրությամբ ընդելուզումներով: Քարերն ունեն տարբեր երանգավորումներ: Արեւմտյան մեծ քաղի կենտրոնական մասում, որպես հանգուցաքարեր, ագուցված են 4 զույգ կեռխաչեր, որոնք տեղադրված են երկու շարքով:Նրանք ունեն կոնստրուկտիվ նշանակություն:

Եկեղեցու ներքին տարածքը լուսավորվում է 12 պատուհանով, որոնցից ավագ խորանի մեջ բացվողը զույգ է, իսկ որմնամույթերով պարփակված արեւմտյան մասերին՝ շրջանաձեւ: Լուսամուտներից վեցը գտնվում է թմբուկի վրա: Ունեն հետաքրքիր դասավորություն՝ երկրի հիմնական առանցքների նկատմամբ մոտ 0.5 մ տեղաշարժված են հարավ-արեւելք ուղղությամբ: Լուսամուտներն արեւի նկատմամբ ավելի նպաստավոր դիրք են ստացել՝ ապահովելով լույսի առավել ներթափանցումը եկեղեցի:

Եկեղեցին արտաքինից առանձնանում է ճարտարապետական հստակ լուծումներով եւ հարդարանքային ինքնատիպ միջոցներով: Բացի արեւմտյան ճակատից, մնացած ճակատներում այն ունի երկուական խորշեր: Դրանք ունեն միատեսակ աստիճանաձեւ անցումներով կտրվածք: Արտաքին պատերով շուրջ բոլորն անցնում է բարդ տրամատի աննըմդհատ գոտի, որը զանազան ձեւափոխումներով խորշերի համար ծառայում է որպես կիսաշրջան պսակներ, իսկ ճակատների կենտրոնական մասերում վեր է ածվում խոշորաչափ, տարբեր նկարվածքներով խաչերի:

Արեւելյան ճակատի զույգ լուսամուտից վերեւ, որն ունի շքեղ երեսկալ, խաչի ստորին թեւի կիսաշրջանաձեւ հիմքի մեջ ներկայացված է ճանկերով որս բռնած թեւատարած արծվի պատկերաքանդակ: Այն համարվում է Վահրամյանների իշխանության տոհմական զինանշանը:

/շարունակությունը՝ էջ 7-ում/

20.qxd 08/10/2026 15:56 Page 7

ՆՐԱ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՊՐԵՆ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

78 տարեկան հասակում կյանքին հրաժեշտ է տվել պետական, քաղաքական ու հասարակական գործիչ Վահագն Վլադիմիրի Հակոբյանը:

Վահագն Վլադիմիրի Հակոբյանը ծնվել է 1948 թվականին, ՀԽՍՀ Կամոյի շրջանի Նորատուս գյուղում: Սովորել եւ ավարտել է Նորատուսի միջնակարգ դպրոցը եւ Երեւանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը: Աշխատել է Կամոյի «Դիպոլ» արտադրական միավորման տեխնոլոգի, ապա՝ ՀԿԿ Կամոյի շրջկոմի երկրորդ քարտուղարի պաշտոններում:

1990-1996 թվականներին ղեկավարել է Կամոյի շրջխորհրդի գործկոմը: 1996-1997 թվականներին աշխատել է ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարի տեղակալի, 1997-1999 թվականներին՝ Գեղարքունիքի մարզպետի տեղակալի պաշտոնում:

1990-1995 թվականներին ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, 1995-1999 թվականներին՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր:

1999-2003 թվականներին աշխատել է Գեղարքունիքի մարզպետի պաշտոնում:

2003-2006 թվականներին ղեկավարել է Երեւանի մետրոպոլիտենը, ապա անցել վաստակած հանգստի:

Նա աչքի էր ընկնում կազմակերպչական ու ղեկավարման ձիրքերով, մարդկանց հոգսերը ընկալելու, կարիքները գնահատելու համբերատարությամբ, մարդամոտ էր, աշխատասեր, ուշադիր ու հոգատար՝ հարազատների, ընկերների ու շրջապատի նկատմամբ:

Նրա ղեկավարմամբ բազմաթիվ կարեւոր կառույցներ են իրականացվել ու շահագործվել ինչպես Գավառի շրջանում, այնպես էլ Գեղարքունիքի մարզում, որոնք տարիներ շարունակ ծառայում են հանրությանը:

Նրան ճանաչում, հարգում ու գնահատում էին ոչ միայն Գեղարքունիքի մարզում, Գավառի շրջանում, հանրապետության տարբեր մարզերում, այլ նաեւ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովում, պետական բոլոր գերատեսչություններում, որոնց հետ համագործակցությունը նա ծառայեցնում էր Գեղարքունիքի մարզի բարօրությանն ու զարգացմանը:

Պետական, քաղաքական ու հասարակական գործչի, հմուտ ղեկավարի, արտադրության կազմակերպչի, մարդասեր ու հայրենասեր մարդու, սիրված ծնողի, ամուսնու, լավագույն ընկերոջ՝ Վահագն Հակոբյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

«Գեղամա աշխարհ»
թերթի խմբագրություն

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԽՈՐԱՆԱՇԱՏ ՎԱՆՔ

/սկիզբը՝ էջ 1-ում, 6-ում/

Ճակատներից նշված գոտիով կազմավորված խաչերից արեւելյանն ուղղաթեւ է, իսկ հյուսիսայինը եւ արեւմտյանը՝ գեղարդաձեւ, որոնք ընկալվում են որպես յուրատեսակ ծաղկապատկերներ: Ճակատների լուսամուտներն ունեն գոտու տրամատը հիշեցնող ուղղանկյուն շրջանակներով երեսակալներ եւ հիշյալ խաչապատկերների հետ գտնվում են հորինվածքային փոխկապվածության մեջ: Մուտքերն ունեն միանման հորինվածք: Արտաքուստ դրանք եզերված են ուղղանկյուն քանդակազարդ շրջանակներով, իսկ բուն բացվածքները՝ նուրբ կիսասյուներով: Բարավորները հարդարված են հյուսիսայինում՝ քառաթեւ եւ շեղաթեւ, իսկ արեւմտյանում՝ վեցաթեւ աստղերի տեսքով՝ պահպանելով գունային ընտրությունը: Թմբուկը շրջառում են բարդ տրամատի եզրավորումներով 12 որմնակամարներ, որոնցում մեկումեջ բացված են նեղ պատուհանները: Մյուս այդպիսի հարադարանք ունեցող հուշարձաններից այն տարբերվում է որմնակամարների խորաքանդակ ձեւի ընտրությամբ, որի շնորհիվ գմբեթի զանգվածը զգալիորեն փոքրացել է: Թմբուկը համաչափ կառուցվածքով եւ ճարտարապետական հարդարանքով համահնչուն է շինության մյուս ծավալների հետ: Հարավային պատի վերին մասում տեղադրված է արեւային ժամացույցը:

Սուրբ Կիրակի եկեղեցին Գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցուց 4 մետր հարավ: Ուղղանկյուն հատակագծով (արտաքինից՝ 4.3 մ x 3 մ), գմբեթավոր կառույց է: Նրա կառուցման վերաբերյալ տեղեկատվություններ չեն պահպանվել: Այն կառուցվել է 13-րդ դարում: Համաձայն Կիրակոս Գանձակեցու՝ գավիթը կառուցվել է «ի դուռն մեծ եկեղեցւոյն», այսինքն այդ ժամանակ եղել է նաեւ փոքր եկեղեցին:

Ներքուստ եկեղեցու չորս անկյուններով բարձրանում են զույգ որմնասյուներ, որոնցից ձգվող կամարներին առագաստային փոխանցումների օգնությամբ հենված է գլանաձեւ թմբուկը: Արտաքին շարվածքի սրբատաշ քարերը մեծ մասամբ բացակայում են: Պահպանված մասերը հնարավորություն են ընձեռում վերականգնել նրա ճակատների ճարտարապետական տեսքը: Ճակտոններն ու միաթեք լանջեր ունեցող պատերից արեւմտյան հատվածում գտնվում է ուղղանկյուն շրջանակով եւ քանդակազարդ երեսակալով շքամուտքը: Մնացած ճակատներում միացած են լուսամուտների ուղղանկյուն շրջանակներին: Հյուսիսային ճակատում լուսամուտների բացակայությամբ պայմանավորված, կիսասյուներն ավարտվում են ուղղաթեւ խաչով, որին նախորդում է կորաթեւ խաչապատկերը: Ճակատների եզրերով բարձրանում են միայնակ կիսասյուները: Որմնակամարները միմյանց հետ կապված են են ոչ թե նույն, այլ հարակից ճակատների համապատասխան անկյունների մոտ գտնվող կիսասյուների հետ: Սուրբ Կիրակի եկեղեցին տեղադրված է բարդ կտրվածքի բարձր գետնախարիսխի վրա:

Սուրբ Ճգնավոր եկեղեցին գտնվում է պարսպից մոտ 150 մետր արեւելյան ուղղությամբ: Ներկայումս կիսավեր վիճակում է: Պահպանված բեկորները ցույց են տալիս, որ եկեղեցին իր հատակագծային (արտաքինից՝ 4.7 մ x 3.4 մ) եւ ծավալատարածական հորինվածքով նման է եղել Սուրբ Կիրակի եկեղեցուն: Նրա շրջակայքում պահպանվել են մի շարք տապանաքարեր: Հնարավոր է, որ այնտեղ եղել է գերեզմանոց:

Եկեղեցու հարդարանքները կենտրոնացված են եղել լուսամուտների եւ արեւմտյան կողմում գտնվող մուտքի մոտ: Գմբեթը ունեցել է չորս փոխանցման առագաստներ, որոնցից յուրաքանչյուրի վրա բարձրաքանդակային ոճով պատկերված են մեկական մարդկային դեմք: Բեմի ճակատային հարթությունը մշակված է եղել հյուսածո զարդաձեւերով: Արտաքինից լուսամուտների վերեւներում տեղադրվել են զույգ գլանիկներից կազմված խաչեր, որոնց թեւերը ավարտվել են շեղ գծված քառակուսիներով:

Մի քանի մետր հեռավորության վրա՝ դեպի հարավարեւմուտք, ընկած է խոշորաչափ թեւերով մի խաչքար, որն ամրացված է եղել պատվանդանին: Երկարությունը կազմել է 3 մետր: Այն կանգնեցվել է Վանական Վարդապետի գերեզմանին : Ներկայումս եկեղեցին գտնվում է հայ-ադրբեջանական սահմանի ակնապատ տարածքում:

Խորանաշատի Գավիթը կից է գլխավոր եկեղեցու արեւմտյան ճակատին եւ պատկանում է կենտրոնական հորինվածքով 4 սյունանի գավիթների տիպին:

Ուղղանկյուն հատակագծով (16.8 մ x 16 մ), արեւելյան կողմում տեղադրված երկու կրկնհարկ ավանդատներով, արտաքուստ ճակտոններով լուծված կառույց է: Գավթի կառուցումը սկսվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցումից ամիջապես հետո: Այդ մասին գավթի առաջին հարկի ավանդատների բարավորներին պահպանվել են 1222 թվականին փորագրված վիմագիր արձանագրություններ, որոնցից հարավ-արեւելյան ավանդատան բարավորի արձանագրությունը շինարարական է.

«ԵՍ ՍԱԻՂՈՄՈՆ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի ՎԱՆՍ ԽՈՐԱՆԱՇԱՏՈ ԵՒ ԵՏՈՒ ՋՇԱԽՍ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԻՍ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՀԱՍՏԱՏԵՑ Բ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ ՈՒՀԱ»:

Գավթի շինարարությունը ընդհատումներով շարունակվում է մինչեւ 1251 թվականը: Կենտրոնական մասում գտնվում են 4 միակտոր սյուներ, որոնք միմյանց եւ հանդիպակաց որմնասյուների հետ կապված են կամարներով: Վերջիններ վրա հենված են ծածկի քաղերը եւ երդիկային բացվածքով կենտրոնական ծածկը: Սյուներից արեւմտյան երկուսը փնջաձեւ են, ունեն վեցական կիսասյուներ: Ավանդատների մոտ՝ եկեղեցու արեւմտյան մուտքի աջ եւ ձախ կողմերում, տեղադրված են երկու բարձր պատվանդաններ: Դրանք նախատեսված են երկրորդ հարկի ավանդատներ բարձրանալու համար: Ներքուստ արեւմտյան պատը եկեղեցու ավագ խորանի օրինակով պատված է 12 գեղակերտ խորշերով՝ վեցը մուտքից աջ, մյուս վեցը՝ ձախ: Դրանք գետնահար, շքաքարերով ավարտված եւ գլանիկավոր շրջանակներով եզերված՝ վերեւում կամարային անցումներով, եկեղեցու համանման տարրեր հիշեցնող խորանաձեւ կերտվածքներ են: Մուտքի բարավորին պատկերված է հավերժության նշանը:

Առանձնահատուկ է գավթի կենտրոնական մասի ծածկը: Կամարների ստեղծած քառակուսի հիմքը վահանաձեւ առագաստների միջոցով վեր է ածված 12-կողանի բազմանկյան, որն իր հերթին եռանկյունաձեւ եւ սեղանաձեւ քարերի դասավորությամբ վերնամասում դառնում է 24 կողանի հիմք: Վերջինիս յուրաքանչյուր 4 կողը դուրս են շեշտված շքաքարային հարդարանքով եռանկյունաձեւ հենարաններ, որոնց վրայից սկզբնավորվող զույգ կամարները փոխհատվելով՝ ստեղծում են վեցանկյուն բացվածքով երդիկը: Այն ապահովում է կոնստրուկտիվ կայունություն գավթին:

Արտաքուստ գավիթը մշակված է ուրույն հարդարանքային ձեւերով, որոնք գլխավորապես բաշխված են արեւմտյան ճակատի կենտրոնական ուղղահայաց առանցքի շուրջը: Արեւելյան ճակատի շքամուտքն իր հորինվածքով եւ քանդակային հարդարանքով եզակի է: Այն եզրավորված է որմնակամարային ավարտվածք ունեցող զույգ գլանիկներով իրականացված երեսակալով: Միակտոր սպիտակ քարե բարավորի երկկենտրոն կորվածքը ընդգծված է կանաչավուն, երկշերտ շքաքարային փորվածքներով: Մուտքի բուն բացվածքի եզրերում տեղադրված են բարակիրառ զույգ որմնասյուներ, որոնք խոյակների փոխարեն պսակված են առյուծի եւ եզան ծավալաքանդակներով: Այս երկու պատկերաքանդակները բարավորի համար հենարաններ են:

Արեւմտյան ճակատի հարդարանքը լրացված է շքամուտքից վերեւ համաչափ տեղադրված միանման բարձրաքանդակ կորաթեւ խաչապատկերներով եւ երկու խաչքրերով: Գավթի ծավալատարածական հորինվածքն ավարտվում է կենտրոնական մասում տեղադրված ութանիստ թմբուկով եւ այն պսակող երդիկային բացվածքով վեղարաձեւ ծածկով:

Սուրբ Աստվածածին, Սուրբ Կիրակի եկեղեցիները, ինչպես նաեւ գավիթը շրջապատված են կոպտատաշ քարերով առանց շաղախի շարված պարսպապատերով:

Խորանաշատը եղել է միջնադարյան Հայաստանի ամենաճանաչված կրթական, գիտամշակութային ու աստվածաբանական կենտրոններից մեկը: Վանական Վարդապետի մահից հետո վարդապետարանը գլխավորել է նրա ազգական ու աշակերտ Գրիգորիս վարդապետը: Խորանաշատի վարդապետարանը եղել է պատմագրական թեքում ունեցող դպրոց, որտեղ ուսանել են 7-8 տարի: Դասավանդել են պատմություն, աստվածաբանություն, իմաստասիրություն, մատենագիտություն, երաժշտագիտություն, քերականագիտություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, բնագիտություն, բուսագիտություն, նաեւ ընդօրինակել ձեռագրեր: Վանական Վարդապետի մի շարք երկեր որպես դասագիրք կամ համառոտ ուղեցույց են ծառայել աշակերտների համար: Սաներից շատերը ուսումնառության տարիներին զբաղվել են գիտությամբ: Շրջանավարտները ստացել են վարդապետական աստիճան եւ զբաղվել ինքնուրույն գործունեությամբ: Վարդապետարանի սաներից 13-րդ դարի հայ եկեղեցու եւ մշակույթի նշանավոր գործիչ Կիրակոս Գանձակեցին գրել է. **«Գալիս էին առ նա ուսման աղագաւ ո՛չ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա եւ շարժումն անգիր օրէնք էին տեսողացն»:**

Խորանաշատը եղել է գրչության կենտրոն: Մեզ են հասել այնտեղ գրված ձեռագրեր՝ մեծ մասը՝ 13-րդ դարից: Վանական Վարդապետը շատ արժեքավոր գործեր է թողել, որոնցից են՝ «Հարցմունք եւ պատասխանք», «Բարոյախոս» եւ «Մատյան ողբերգության» ձեռագրերը: Դրանցից պահպանվել ու այժմ Մատենադարանում պահվում են տարբեր դարաշրջաններում ապրած ու գործած գրիչներ Ստեփանոս Աղթամարցու, Մարտիրոսի ու Ավետիսի ձեռագիր աշխատությունները:

Ահա հայ հոգեւոր գանձարաններից մեկի չխամրող փառքի պատմությունը, որն ամեն հայի հաղորդում է ոգի, հավատ, սեր, մի առասպելական ուժ՝ ընդդեմ մեր ժողովրդին բաժին ընկած եղերական դարերի շարունակության, ընդդեմ ավարառու, նենգ, ամեն ինչ հափշտակող ու բնաջնջող ցեղերի նոր հայասպան ոճիրների:

Խարանաշատը հենց անընկճելի հայ մարտիկն է՝ մեր անմահ էպոսի Խաչ-Պատերազմին, որ միշտ սպասում է իր ուխտավորներին:

Խոսրով Խլղաթյան

20.qxd 08/10/2026 15:56 Page 8

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԵԼ ԵՆ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՎԱԾ 2 ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում վերջապես իրենց տեղն են գտել տարիներ առաջ անցկացված քանդակագործության սիմպոզիումի արդյունքում ստեղծված երկու քանդակները՝ Գարեգին Դավթյանի «Մինոտավրի սերը» եւ Սամվել Մարտիրոսյանի «Հրեշտակը» ստեղծագործությունները:

Ինչպես տեղեկացրեց քանդակագործության սիմպոզիումի կազմակերպիչ, ՀՀ Նկարիչների միության անդամ, գեղանկարիչ եւ քանդակագործ Արամայիս Խլղաթյանը, «Մինոտավրի սերը» քանդակը տեղադրվել է Մարտունու Արվեստի դպրոցի բակում, իսկ «Հրեշտակը»՝ Աբովյան-Կամո փողոցների խաչմերուկի եռանկյունի հատվածում:

Քանդակների տեղադրման ու բացման միջոցառումներին ներկա են եղել նաեւ հեղինակները:

-Տարիներ առաջ անցկացված քանդակագործության սիմպոզիումի շնորհիվ Մարտունի քաղաքը զարդարվեց յոթ բարձրարվեստ քանդակներով, որոնցից 5-ը տեղադրվեցին տարբեր փողոցներում, իսկ Գարեգին Դավթյանի «Մինոտավրի սերը» եւ Սամվել Մարտիրոսյանի «Հրեշտակը» քանդակները մնացել էին թիվ 3 եւ 4 մանկապարտեզների բակային հատվածում: Համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը մեր դիմումին դրականորեն արձագանքեց, ինչի արդյունքում էլ այդ քանդակները համապատասխան որոշմամբ վերջապես գտան իրենց մշտական տեղերը: Եկող տարի մտադրվել ենք անցկացնել քանդակագործության հերթական սիմպոզիումը, որի արդյունքում կփորձենք ստեղծել բարձրարվեստ եւս 7 քանդակներ՝ մեր քաղաքի տեսքին առանձնակի շուք հաղորդելու համար: Անգամ մտադրվել ենք սիմպոզիումի աշխատանքներին հրավիրել արտասահմանցի անվանի քանդակագործների՝ մեր ձեռնարկին ու մեր քաղաքին միջազգային հնչեղություն հաղորդելու համար,-նշեց Արամայիս Խլղաթյանը:

Խոսրով Խլղաթյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին՝ Տարեցների միջազգային օրվա առիթով, «Առաքելություն Հայաստան» կազմակերպության Սեւանի սոցիալական համայնքային կենտրոնը Սեւանի Ս. Զաքարյանի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպել է բովանդակալից միջոցառում:

Սեւանի մշակույթի կենտրոնի ճեմասրահում ներկայացվել են կենտրոնի այցելուների ձեռքի աշխատանքները, որոնք իրենց մեջ կրում էին ստեղծագործական ոգի, ջերմություն ու տարիների փորձ:

Միջոցառման ընթացքում գեղեցիկ կատարումներով հանդես են եկել Սեւան պարային խմբի սաները, ինչպես նաեւ «Առաքելություն Հայաստան» կազմակերպության Սեւանի սոցիալական համայնքային կենտրոնի այցելուները՝ օրը դարձնելով առավել հուզիչ ու հիշարժան:

Այս օրը եւս մեկ առիթ է՝ մեր տատիկներին, պապիկներին, ծնողներին եւ ավագ սերնդի բոլոր ներկայացուցիչներին հայտնելու մեր սերն ու երախտագիտությունը:

Նրանք են իրենց կյանքի փորձով, իմաստնությամբ, հոգատարությամբ ու անսահման սիրով արժեք ու ջերմություն հաղորդում մեր կյանքին:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 154 ԵՐԵԽԱ.

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում 2026 թվականի սեպտեմբեր ամսին ծնվել է 154 երեխա՝ 71 տղա եւ 83 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 83 ծնունդ գրանցվել է Մարտունու ծննդատանը, 33 ծնունդ՝ Գավառի, 23 ծնունդ՝ Սևանի, 14 ծնունդ՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 1 ծնունդ՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2025 թվականի սեպտեմբեր ամսին Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում գրանցվել է 163 երեխայի ծնունդ:

Խոսրով Խլղաթյան

ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՋՐԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԵՆ

Սեպտեմբերի երրորդ տասնօրյակից արդեն դադարեցվել են Սեւանա լիճից ոռոգման նպատակներով իրականացվող ջրբացթողումները:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի տվյալներով՝ 2026 թվականի սեպտեմբերի 29-ի դրությամբ, հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ոռոգման նպատակներով Սեւանա լից բաց թողնված ջրի ընդհանուր ծավալը կազմել է 75 միլիոն 306 հազար խորանարդ մետր ջուր: Իսկ այս տարվա անցած ինն ամիսների ընթացքում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 175 միլիոն 234 հազար խորանարդ մետր ջուր, ինչը շուրջ 2,3 անգամ ավելին է լճից բաց թողնված ջրի քանակից:

2026 թվականի սեպտեմբերի 29-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 63 սանտիմետր բարձրության վրա, ինչը 11 սանտիմետրով բարձր է մնում 2025 թվականի նույն օրվա նիշից:

ՎԱՐԴԵՆԻԿՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի սեպտեմբերի վերջին օրերին Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ գյուղում տեղի է ունեցել բռնցքամարտի միջազգային առաջնութուն՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 35-րդ տարեդարձին:

Ինչպես տեղեկացրեց ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գեւորգ Սարգսյանը, մրցաշարին մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզի, Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության բռնցքամարտիկները:

Մասնակից 130 բռնցքմարտիկների միջեւ ընթացած պայքարում մրցանակային 1-ին տեղը զբաղեցրել է Մարտունու մարզադպրոցի թիմը: 2-րդ տեղում Աջարիայի թիմն է, 3-րդ տեղում՝ Թբիլիսիի «Սպարտանցի» ակումբը:

Մրցաշարի կազմակերպիչն էր Մարտունու համայնքապետարանը:

Հաղթողները պարգեւատրվել են մեդալներով, դիպլոմներով եւ հուշանվերներով:

Մրցաշարն արդեն դարձել է ավանդական, որն անցկացվում է 15-րդ անգամ:

ԿԱՅԱՑԵԼ Է ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Սեպտեմբերի 22-ին կայացել է Սեւան համայնքի ավագանու 10-րդ նստաշրջանի առաջին նիստը, որը վարել է համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը:

Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մարիանա Ռաֆայելյանը ներկայացրել է Սեւան համայնքի 2026 թվականի բյուջեի 1-ին կիսամյակի վերաբերյալ հաղորդագրությունը:

Համաձայն ներկայացված հաղորդագրության՝ Սեւան համայնքի 2026թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների /վարչական եւ ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 91,9 տոկոսով:

Վարչական բյուջեի պլանը կազմել է 1 միլիարդ 220 միլիոն 893,5 հազար դրամ, որի դիմաց որպես սեփական եկամուտ հավաքագրվել եւ պետական բյուջեից դոտացիա է ստացվել 1 միլիարդ 238 միլիոն 886,7 հազար դրամ, կատարողականը կազմել է 101,47 տոկոս, առկա է 17 միլիոն 993,2 հազար դրամ եկամուտների գերակատարում:

Բանախոսը ներկայացրել է 2026 թվականի բյուջեի 1-ին կիսամյակի ցուցանիշները՝ եկամտային, ծախսային բաղադրիչներով, ինչպես նաեւ համեմատականներ անցկացրել անցյալ տարվա նույն ժամանակահատվածի հետ:

Օրակարգային հարցերը ներկայացվել են աշխատակազմի բաժինների պետերի, աշխատակազմի ղեկավարի կողմից:

Համայնքի ավագանու համապատասխան որոշումներով ստեղծվել է «Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գեղամավան բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն, դրամաշնորհ է հատկացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի եւ «Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ՍՊԸ-ին, նոր խմբագրությամբ հաստատվել են «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սեւանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, Սեւան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները, Սեւան համայնքի Սեւան, Գագարին, Դմոշեն, Ծաղկունք բնակավայրերում անվանակոչվել են փողոցներ, նախկինում ընդունված մի շարք որոշումներում կատարվել են փոփոխություններ, կայացվել են այլ որոշումներ:

Ավագանու նիստն ամփոփվել է ՀՈԱԿ-ների տնօրենների, վարչական ղեկավարների զեկուցագրերի, ընկերությունների, քաղաքացիների դիմումների քննարկմամբ, որոնց մի մասը ստացել են սպառիչ պատասխան՝ համապատասխան որոշումների ընդունմամբ:

Հերթական նիստն ամփոփելիս Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը եւս մեկ անգամ ընդգծեց աղբահանության դիմաց վարձավճարների ժամանակին վճարման կարեւորությունը:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Կայք էջ՝ https://geghama.am/
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 09. 10. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: